



Վ. Ի. ԼԵՆԻՆ

1861 թ. "ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ  
ՌԵՖՈՐՄԻ.. ՄԱՍԻՆ

194  
//

3K23  
3-14

Ա.Զ.

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅՆՔ

26 MAY 2005

14 NOV 2009

ՅԿՀ

2-14

այ.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

2-35

1861 թ. "ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ  
ՌԵՖՈՐՄԻ", ՄԱՍԻՆ

ԻՍԿՐԱԿԱՆ ԳՐԱԿՈՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1940



1632  
40

В. И. ЛЕНИН

О «КРЕСТЬЯНСКОЙ РЕФОРМЕ» 1861 г.

Государственное издательство политической литературы

Ереван ● 1940

Ներկա ժողովածուի մեջ մտել են Վ. Ի. Լենինի՝ Ռուսաստանում 1861 թ. ճորտատիրական իրավունքը վերացնելու մասին գրած հինգ հոդվածները:

Այդ հոդվածները պատմում են այն մասին, թե ցարական կառավարութունն ինչպես անցկացրեց գյուղացիների «ազատագրումը» ճորտատիրական կախումից, թե ինչպես ճորտատեր-կալվածատերերը կողոպտեցին գյուղացիներին, նրանցից կտրելով այն հողաբաժինների մեծ մասը, վորոնք շատ դարեր գյուղացիներին եյին պատկանում, թե ինչպես ստիպում եյին գյուղացիներին վիթխարի փրկագին վճարել մշտապես գյուղացիներին պատկանած հողերի համար:

Հենց այդ հոդվածներից ընթերցողը կիմանա նաև 1861 թ. «մեծ ռեֆորմը» ստոլիպինյան հողային քաղաքականությամբ (1906—1910 թ.) ավարտելու մասին, այսինքն՝ գյուղացիական հողերը կողոպտման հանձնելով կուլակներին և պարագիտներին:

Այդ հոդվածները ցույց են տալիս, թե ինչպես բուրժևեիկների կուռակցությունը ինքնակալության պայմաններում հերոսական աշխատանք եր տանում հեղափոխական պրոլետարիատի շուրջն աշխատավոր գյուղացիությանը համախոթելու ուղղությամբ, թե ինչպես բուրժևեիկների կուռակցությունը գյուղացիությանը հանում եր հեղափոխական պայքարի:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ ԿՑՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Քառասուն տարի յե անցել գյուղացիների ազատագրման ժամանակից: Միանգամայն բնական է, վոր մեր հասարակությունն առանձին վոգետորությամբ է տոնում փետրվարի 19-ի՝ որը—հին, ճորտատիրական Ռուսաստանի անկման որը, սկիզբն այն դարաշրջանի, վորը ժողովրդին խոստանում էր ազատություն և բարորություն: Բայց չպետք է մոռանալ, վոր տոնակատարողների գովասանական ճառերում, դեպի ճորտատիրությունը և դեպի նրա բոլոր արտահայտությունները տածած անկեղծ թշնամության կողքին, շատ կեղծավորություն կա: Ամբողջապես կեղծավորությամբ է թափանցված և սուտ է «մեծ» ռեֆորմի այն գնահատականը, վորը մեզ մոտ զնայուն է դարձել.—«գյուղացիների ազատագրումը հողով հանդերձ՝ պետական փրկանքի ոգևորքամբ»: Իսկ իրականում դա գյուղացիների ազատագրումն էր հողից, վորովհետև այն հողարածիններից, վոր դարերի ընթացքում գյուղացիները տիրում էին, հսկայական ոտբեզկաներ արվեցին, իսկ հարյուր—հարյուր գյուղացիներ միանգամայն հողազրկվեցին,—բրվեցին քառորդ դեսյատինի կամ մուրացիկի հողաբաժնի վրա: Իրականում, գյուղացիները կողոպտվեցին կրկնակի. բավական չէր, վոր նրանցից կտրեցին հողը, նրանց հարկադրեցին դեռ «փրկանք» էլ վճարել նրանց թողած և միշտ էլ նրանց տիրության տակ յեղած հողի համար, և ընդամին հողի փրկանքի գինը նշանակված էր նրա իսկական գնից շատ ավելի բարձր: Ազատագրումից տաս տարի անց՝ իրենք կալվածատերերն էին խոստովանում գյուղատնտեսության վի-

ճակն ուսումնասիրող կառավարական չինովնիկներին, թե  
գյուղացիներին հարկադրեցին վճարել վո՛չ միայն իրենց հո-  
ղի համար, այլև իրենց ազատութեան համար: Յեւ, անձ-  
նական ազատագրութեան համար փրկանք վերցնելով, գյու-  
ղացիներին այնուամենայնիվ ազատ մարդիկ չդարձրին.  
Նրանց ջրան տարի ժամանակավոր-պարտավորված թողին,  
նրանց թողին— նրանք մինչև այժմ ել մնում են—ստորին  
դաս, վորոնք յենթակա յեն գանակոծութեան, վորոնք հա-  
տուկ հարկեր են վճարում, չեն համարձակվում ազատորեն  
հեռանալու կիսաճորտական համայնքից, ազատորեն տնորի-  
նելու իրենց հողը, ազատորեն ընակութուն հաստատելու  
պետութեան՝ իրենց ուղած վայրում: Մեր գյուղացիական  
ոնջորմը կառավարութեան մեծահոգութեան մասին չէ, վոր  
վկայում է. ընդհակառակը, նա մեծազույն պատմական  
որինակն է հանդիսանում այն բանի, թե ամեն մի դործ  
ինչ ատիճանի ապականված է դուրս դալիս ինքնակալ  
կառավարութեան ձեռքից: Ռազմական պարտութեան, սոս-  
կալի ֆինանսական դժվարութեաններէ և գյուղացիներէ  
ահեղ հուզումների ճնշման տակ կառավարութեանն ուղղա-  
կէ հարկադրված եր ազատագրելու նրանց: Ինքը ցարը խոս-  
տովանեց, թե պետք է ազատագրել վերելից, քանի չեն  
սկսել ազատագրել ցածից: Բայց ազատագրութեանը ձեռ-  
նարկելով՝ կառավարութեանն արեց բոլոր հնարավորն ու  
անհնարինը, վորպեսզի բավարարի «նեղացած» ճորտատե-  
րերի ազահոյութունը: Կառավարութեանը կանգ չառավ  
նույնիսկ այնպիսի դազրելիութեան առջև, ինչպես այն  
մարդկանց նենդափոխումը, վորոնք կոչված էին իրագոր-  
ծելու ոնջորմը,—թեև այդ մարդիկ կոչված էին հենց  
ազնվականներէ՝ շարքից: Առաջին կոչի հաշտարար միջ-  
նորդներն՝ արձակվեցին և փոխարինվեցին այնպիսի մարդ-  
կանցով, վորոնք անընդունակ էին մերժելու ճորտատերե-  
րին՝ գյուղացիների պրկման գործում և հենց հողի սահ-  
մանագծման ժամանակ: Յեւ մեծ ոնջորմը չեր լինում ի  
կատարածել առանց զինվորական եկզեկուցիաների և  
գյուղացիների գնդակահարութեան, վորոնք հրաժարվում  
էին ընդունելու կանոնադրերը<sup>3</sup>: Զարմանալի չէ, վոր այդ  
ժամանակի լավագույն մարդիկ, կաշկանդված լինելով

գրաքննական զնչակալով, լուսթեան անեծքով ընդունեցին  
այդ մեծ ոնջորմը...<sup>4</sup>

Կոռից «ազատագրված» գյուղացին ոնջորմատորի ձեռ-  
քից դուրս յեկավ այնպես արբւլած, կողոպտված, սոս-  
րացված, իր հողաբաժնին կաճ, վոր նրան վոչինչ չեք  
մնում, բայց յեթե «հոժարակամ» կոռի դիմել: Յեւ մու-  
ժիկն սկսեց մշակել իր նախկին ալայի հողը, նրանից «վար-  
ձակալելով» իրենից իսկ կտրած հողերը, ձմեռը—սոված  
ընտանիքի համար հացի փոխատվութուն ստանալու դի-  
մաց—ամառային աշխատանքի վարձվելով: Աշխատավճա-  
րում և ստրկացում—ասա թե ինչ դուրս յեկավ իրականում  
այն «ազատ աշխատանքը», վորի վրա «աստու որհնու-  
թեանը» կանչելու յեր հրավիրում գյուղացուն ճիզվիտ տեր-  
տերի ձեռքով կազմված մանիֆեստը:

Իսկ այդ կարվածատիրական հարստահարութեանը, վո-  
րը պահվում եր ոնջորմն ստեղծած ու իրագործած չինով-  
նիկներին մեծահոգութեան շնորհիվ, ալեկացալ նաև կապի-  
տալի հարստահարութեանը: Փողի իշխանութեանը, վոր  
ճնչել է մինչև անգամ, որինակ, Փրանսական դշուղացուն,  
վոր ազատագրվել է կարվածատիրական իշխանութեանից  
վո՛չ թե խղճուկ, կիսատ ոնջորմով, այլ հզոր ժողովրդա-  
կան հեղափոխութեամբ,—վողի այդ իշխանութեանն իր  
ամբողջ ծանրութեամբ ընկավ մեր կիսաճորտ մուժիկի վրա:  
Փող ճարել հարկավոր եր՝ ինչ էլ վոր լիներ, թե՛ բարերար  
ոնջորմի ալեկացրած հարկերը վճարելու, թե՛ հողը վար-  
ձելու, թե՛ գործարանային արդյունաբերութեան այն խըղ-  
ճուկ արտագրանքները գնելու համար, վորոնք սկսել էին  
դուրս մղել գյուղացու տնային արտագրանքները, թե՛ հաց  
գնելու համար և այլն: Փողի իշխանութեանը վո՛չ միայն  
ճնչեց, այլև պառակտեց գյուղացիութեանը. հոկայական  
մասսան անչեղորեն քայքայվում եր և պրոլետար դառնում,  
փոքրամասնութեանն իր միջից գատում եր փոքրաթիվ,  
բայց գյուղացիական տնտեսութեանն ու գյուղացիական հո-  
ղերն իրենց ձեռքը ժողոված մի բուռ կառչուն կուլակներ  
և ունեոր մուժիկներ, վորոնք կազմում են ծնվող գյու-  
ղական բուրժուազիայի կազրերը: Հետոնջորմեան ամբողջ

բառասնամտակն այդ գյուղացիաթափման օտակ համատարած մի սրտցես ե, դանդաղ, ցավազին մահացման սրտցես: Գյուղացին հասցված եր մուրացիկ կյանքի մակարդակի. նա իր անասունների հետ միատեղ եր ապրում, ցնցոտի հազնում, թելուկով կերակրվում. գյուղացին փախչում եր իր հողաբաժնից, յեթե փախչելու մի վորեւե տեղ կար, անդամ փրկագնվելով հողաբաժնից, վճարելով նրան, ով համաձայնվում եր վերցնելու հողաբաժինը, վորի տուրքերը գերազանցում եյին նրա յեկամտաբերությունից: Գյուղացիները խրոնիկաբար սոված եյին մնում և տասնյակ հազարներով մեռնում սովից ու անբերությունների ժամանակ ծագող համաճարակներից, անբերություններ, վորոնք ալիւն ու ալիւն հաճախ եյին կրկնվում:

Այսպես ե գրությունը մեր գյուղում նաև այժմ: Հարց ե ծագում՝ վորտե՞ղ փնտռել յեղը և ի՞նչ միջոցներով գլուխ բերել գյուղացու վիճակի բարելավումը: Կապիտալի ճնշումից մանր գյուղացիությունը կարող ե ազատվել բանվորական շարժմանը հարելով միայն, ոգնելով նրան այն պայքարում, վոր նա մղում ե սոցիալիստական հասարակակարգի համար, հողը, ինչպես և արտադրության մյուս միջոցները (Ֆարքիլաները, գործարանները, մեքենաները և այլն), հասարակական սեփականություն դարձնելու համար: Փորձել գյուղացիությանը կապիտալիզմի գրոհից փրկել՝ մանր անտեսությունը և մանր սեփականությունը պաշտպանելով—ինչանակեր անողուտ կերպով կատեցնել հասարակական դարգացումը, խարել գյուղացուն մի պատրանքով, թե կապիտալիզմի որով ել հնարավոր ե բարորություն, իրարից անջատել աշխատավոր դասակարգերին, ստեղծելով փոքրամասնության համար արտոնյալ գրություն մեծամասնության հաշվին: Ահա թե ինչու սոցիալ-դեմոկրատները միշտ պիտի պայքարեն այնպիսի անմիտ ու վնասակար հաստատությունների դեմ, ինչպիսին են գյուղացիական հողաբաժնիների անտարելիությունը, համապարտ գյուղացիական համայնքից ազատ կերպով դուրս գալու և նրա մեջ ուզածը դասի պատկանող անձերին ազատ կերպով ընդունելու արգելքը: Բայց մեր գյուղացին տառապում ե,

ինչպես մենք տեսանք, վոր միայն և նույնիսկ վոր այնքան կապիտալի ճնշումից, վորքան կալվածատերերի ճնշումից ու ճորտատիրության մնացորդներից: Անողք պայքարն այդ կապանքների դեմ, վորոնք անչափելիորեն վատթարացնում են գյուղացիության գրությունը և կապում են նրա ձեռքն ու վտաքը, վոր՛չ միայն հնարավոր ե, այլև անհրաժեշտ ե յերկրի ամբողջ հասարակական դարգացման շահերի համար, վորովհետև մուժիկի անելանելի աղքատությունը, սոցիալությունը, իրավադրկությունը և ստոր վիճակը ասիականության դրոշմ են դնում մեր հայրենիքի բոլոր կարգերի վրա: Յեվ սոցիալ-դեմոկրատիան իր պարտքը կատարած չեր լինի, յեթե այդ պայքարին լիակատար և ամեն տեսակ աջակցություն ցույց չտար: Այդպիսի աջակցությունը, կարճ ասած, պիտի արտահայտվի այն բանում, վոր դասակարգային պայքարը գյուղ մուծվի:

Մենք տեսանք, վոր ժամանակակից սուսական գյուղում համատեղվում են յերկու տեսակի դասակարգային հակադրություններ. առաջին՝ գյուղական բանվորների և գյուղական ձեռնարկուների միջև, յերկրորդ՝ ամբողջ գյուղացիության և ամբողջ կալվածատեր դասակարգի միջև: Առաջին հակադրությունը դարգանում և աճում ե, յերկրորդը—աստիճանաբար թուլանում ե: Առաջինը—ամբողջպես դեռ ապագայումն ե, յերկրորդը—նշանակելի չափով արդեն անցյալումն ե: Յեվ չնայած դրան, ժամանակակից սուսական սոցիալ-դեմոկրատների համար հենց յերկրորդ հակադրությունն առավել եյական և առավել գործնականորեն կարևոր նշանակություն ունի: Վոր մենք պեսք ե մեզ ներկայացող բոլոր առիթներից ոգավենք՝ գյուղատնտեսական վարձու բանվորների մեջ դասակարգային ինքնադիտակցությունը դարգացնելու համար, վոր մենք այդ պատճառով պետք ե ուշադրություն դարձնենք քաղաքային բանվորներին (որինակ՝ շոգեշարժ կալսիչների վրա զբաղվող մեխանիկներին և այլն) գյուղ տեղափոխելու վրա, վոր մենք պետք ե ուշադրություն դարձնենք գյուղատնտեսական բանվորների վարձման շուկաների վրա, —այդ ինքնըստինքյան հասկանալի չե, այդ աքսիոմա յե ամեն մի սոցիալ-դեմոկրատի համար:

Բայց մեր գյուղական բանվորները դեռ չափազանց ամուր են կապված գյուղացիութեան հետ, նրանց վրա դեռ չափից դուրս ծանրանում են համադաշնագիտական թշվառութեանները, և այս պատճառով գյուղական բանվորները շարժումը վոչ մի կերպ չի կարող համադաշին նշանակութուն ստանալ վո՛չ այժմ, վո՛չ ամենամերձավոր ապագայում: Ընդհակառակը, ճորտատիրութեան մնացորդներն ավելու-սրբելու հարցը, սուսական պետութեան բոլոր կարգերից դասային անիրավահավասարութեան և սոսնյակ-միջիոնավոր «հասարակ ժողովրդի» ստորացման վոզին վոչընչացնելու հարցը,—այս հարցն արդեն այժմ ունի համադաշին նշանակութուն, և մի կուսակցութուն, վորն ազատութեան առաջավոր մարտիկի դեր կատարելու հասկանութուն ունի, չի կարող մի կողմ քաշվել այս հարցից:

Գյուղացու թշվառութեանները ճանաչումը հիմա դարձել է (ավելի կամ պակաս ընդհանուր ձևով) համարյա ընդհանրական, 1861 թ. ուեֆորմի «թերութեանները» վերաբերյալ և պետական ոգնութեան անհրաժեշտութեան վերաբերյալ Ֆրազը դարձել է դեռյուն ճշմարտութուն: Մեր պարտքն է մասնանշել այն բանի վրա, վոր այդ թշվառութեանները ծագում են հենց գյուղացիութեան դասակարգային ճնշումից, վոր կառավարութունը ճնշողների դասակարգերի հավասարիմ պաշտպանն է, վոր վո՛չ թե նրանից ոգնութուն, այլ նրա ճնշումից փրկութուն, քաղաքական ազատութեան նվաճում պետք է ձեռք բերեն այդ կառավարութեանից նրանք, ովքեր անկեղծորեն ու լրջորեն ցանկանում են գյուղացիները փրկութեան արմատական բարեկամումը: Սոսում են փրկավճարների չափազանց բարձր լինելու մասին, այն բարերար միջոցի մասին, յեթե կառավարութունն իջեցնի այդ վճարները և փոփոխի նրանց ժամկետը: Մենք այդ առթիվ կասենք, վոր այդ բոլոր փրկավճարները վոչ այլ ինչ են, բայց յեթե որինական ձևերով և չինովնիկական Ֆրազներով քողարկված՝ գյուղացիների կողոպուտ կալվածատերերի ու կառավարութեան կողմից, վոչ այլ ինչ են, բայց յեթե մի տուրք ճորտատերերին՝ նրանց ստրուկների ազատագրութեան համար: Մենք կառաջադրենք փր-

կավճարների և բահրային դանձումների անհապաղ և լրիվ վերացման պահանջ, այն հարյուրավոր միլիոնները ժողովրդին վերադարձնելու պահանջ, վոր տարիներով պոկել և ցարական կառավարութունը ստրկատերերի ախորժակը բավարարելու համար: Սոսում են գյուղացիների սակավահոգութեան մասին, գյուղացիական հողատիրութունն ընդարձակելու համար պետական ոգնութեան անհրաժեշտութեան մասին: Մենք այդ առթիվ կասենք, վոր հենց շնորհիվ պետական ոգնութեան—հասկանալի յե, կալվածատերերին ընձեռած ոգնութեան,—գյուղացիները այսպիսի բազմաթիվ դեպքերում զրկվել են իրենց համար ամենամահրաժեշտ հողից: Մենք պահանջ կառաջադրենք—վերադարձնել գյուղացիներին այն ոտրեղիաները, վորոնց միջոցով շարունակում է դիմանալ անազատ, ստրկական, կոռային, այսինքն՝ իրականում նույն ճորտական աշխատանքը: Մենք պահանջ կառաջադրենք—հիմնել գյուղացիական կոմիտեներ՝ ուղղելու այն աղաղակող անարդարութեանները, վոր ազատագրվող ստրուկները նկատմամբ արել են ցարական իշխանութեան կողմից հիմնված ազնվականական կոմիտեները: Մենք կպահանջենք դատարաններ հիմնել, վորոնք իրավունք ունենան իջեցնելու հողի անչափ բարձր վճարը, վոր գանձվում է կալվածատերերի կողմից շնորհիվ գյուղացիների անկանխի դրութեան,—դատարաններ, վորոնց առջև գյուղացին իրավունք ունենա վաշխատութեան համար հետապնդելու նրանց, ովքեր ստրկացուցիչ գործարքներ են կընքում, ոգավելով մյուսի ծայրահեղ կարիքից: Մենք ամեն ժամանակ և ամեն առիթով ջանալու յենք բացատրել գյուղացիներին, թե այն մարդիկ, վորոնք նրանց բան են ասում արդի պետութեան խնամակալութեան կամ ոգնութեան մասին—կա՛մ հիմարներ են, կա՛մ շառլատաններ և նրանց վատթարագույն թշնամիներն են, վոր գյուղացիութեանն անհրաժեշտ է ամենից առաջ փրկվել չինովնիկների իշխանութեան կամայականութեանից ու ճնշումից, հարկավոր է ամենից առաջ բոլոր տեսակետներից նրանց լիակատար և անպայման իրավահավասարութեան ճանաչումը մյուս բոլոր գասերի հետ, հարկավոր է տեղափոխութեան ու գաղթի

լիարկատար ազատութիւնն, հողերի տնօրինման ազատութիւնն, բոլոր համայնական գործերի և համայնական յեկամուտների տնօրինման ազատութիւնն: Յուրաքանչյուր ուսական գյուղի կյանքից վերցրած ամենասովորական փաստերը կարող են միշտ հազարավոր առիթներ տալ աշխտացիա մղելու հանուն մատնանշված պահանջներին: Այդ աշխտացիան պետք է յենի տեղական, կոնկրետ, գյուղացիների առավել հասունացած կարիքներից, բայց չպիտի կանգ առնի այդ կարիքներին վրա, այլ անդադար պետք է ընդարձակի գյուղացիների մտահորիզոնը, անդադար պետք է զարգացնի նրանց քաղաքական գիտակցութիւնը, մատնանշի այն առանձին տեղը, վոր պետութեան մեջ դրաւում են կալվածատերերն ու գյուղացիները, մատնանշի, թե գյուղի համար միակ միջոցը՝ փրկելու նրա վրա կախված կամայականութեան ու կեղեքումի ճնշումից—ժողովրդական ներկայացուցիչներին հրավիրումն է, չինովնիկներին ինքնիշխանութեան տապալումն է: Անհեթեթ ու անմիտ բան է այն պընդումը, թե իբր քաղաքական ազատութեան այս պահանջն անմատչելի յե բանվորների գիտակցութեանը. վո՛չ միայն այն բանվորները, վոր Փարրիկանտների ու վոստիկանութեան դեմ մղած ուղղակի պայքարի տարիներ են ապրել, վորոնք մշտապես տեսել են իրենց շարքերից լավագույններին կամայական ձերբակալումներն ու հալածանքները, վո՛չ միայն սոցիալիզմով արդեն վարակված այդ բանվորները, այլև ամեն մի բանիմաց գյուղացի, վոր գեթ մի քիչ մտածում է այն բանի վրա, ինչ վոր նա տեսնում է իր շուրջը, է վիճակի կլինի հասկանալու և յուրացնելու, թե ինչի համար են պայքարում բանվորները, յուրացնելու զեմսկի սոբորի գաղափարը, սոբորի, վոր ազատագրում է ամբողջ յերկիրն ատելի չինովնիկների ամեն իշխանութիւնից: Յեւ գյուղացիութեան անմիջական ու ամենից ամէնի կենսական կարիքների հողի վրա մղած աշխտացիան միայն այն ժամանակ է վիճակի կլինի կատարել իր խնդիրը—դասակարգային պայքարը մուծել գյուղ—յերբ այս կամ այն «տնտեսական» շարիքի յուրաքանչյուր մերկացման հետ՝ նա կարող կլինի վորոչ քաղաքական պահանջներ կատարել:

Բայց հարց է ծագում, կարո՞ղ է արդյոք սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութիւնն իր ծրագրի մեջ մտցնել վերը մատնանշվածների նման պահանջներ: Կարո՞ղ է արդյոք նա հանձն առնել աշխտացիա մղելու գյուղացիութեան մեջ: Չի՞ տանի արդյոք դա դեպի այն, վոր մենք մեր հեղափոխական ուժերը, վոր առանց այն ել այնքան սակավաթիւ են, կցրենք և շարժման գլխավոր ու միակ վստահելի հունից դեպի այլ կողմ կուղղենք:

Այդպիսի առարկութիւնները թյուրիմացութեան վրայ են հիմնված: Այո՛, մենք անպայման մեր ծրագրում պիտի մտցնենք՝ մեր գյուղը ստրկութեան բոլոր մնացուկներից ազատագրելու վերաբերյալ պահանջներ, վորոնք ընդունակ լինեն յին գյուղացիութեան լավագույն մասի մեջ առաջ բերելու յեթե վո՛չ ինքնուրույն քաղաքական պայքար, այլ բանվոր դասակարգի ազատագրական պայքարին գիտակից աջակցութիւն: Մենք սխալ կաննելինք, յեթե պաշտպան կանգնելինք այնպիսի միջոցներին, վորոնք ընդունակ են կանգնելու հասարակական դարգացումը, կամ արհեստականորեն պատվարել մանր գյուղացիութեանը կապիտալիզմի աճումից, խոշոր արտագրութեան դարգացումից, բայց ամէնի ևս կորստաբեր կլինեն այն սխալը, յեթե մենք չկարողանայինք ողտվել բանվորական շարժումից՝ տարածելու գյուղացիութեան մեջ այն դեմոկրատական պահանջները, վոր չի իրագործել 1861 թ. փետրվարի 19-ի ունիոնը, շնորհիվ նրա խեղաթյուրման՝ կալվածատերերի և չինովնիկների կողմից: Այդպիսի պահանջներ մտցնելն անհրաժեշտ է մեր կուսակցութեան համար, յեթե նա ուզում է ամբողջ ժողովրդի գլուխ կանգնել ինքնակալութեան դեմ պայքարելու համար\*): Բայց այդպիսի ներառումը բնավ չի յենթադրում, թե մենք կսկսենք ակտիւ հեղափոխական

\* Մեր կողմից արդեն կազմված է սոցիալ-դեմոկրատական ծրագրի նախագիծը՝ նրա մեջ ներառյալ վերը մատնանշված պահանջները: Մենք հույս ունենք «Աշխատանքի Ազատագրութիւն» խմբի աջակցութեամբ այդ նախագիծը քննելուց ու վերամշակելուց հետո մոտակա համարներից մեկում հրատարակել մեր կուսակցութեան ծրագրի նախագիծը: Ծանոթագրութիւն 1 Էնիսի:



ուժերը քաղաքից դեպի գյուղ կոչել: Այդ մասին խոսք ան-  
զամ չի կարող լինել: Վոչ մի կասկածի յենթակա չէ, վոր  
կուսակցութեան բոլոր մարտական տարրերը պիտի ձգտեն  
դեպի քաղաքները և դեպի Փարբիկա-գործարանային կենտ-  
րոնները, վոր միայն արդյունաբերական պրոլետարիատն  
և ընդունակ անդարձ ու մասսայական պայքար մղելու ինք-  
նակալութեան դեմ, վոր միայն այդ պրոլետարիատն և ըն-  
դունակ իր ուսերին կրելու պայքարի այնպիսի միջոցներ,  
ինչպիսին բացահայտ դեմոնստրացիայի կազմակերպումն է,  
կամ կանոնավոր լույս տեսնող և լայն տարածվող ժողովրդ-  
դական քաղաքական թերթի հրատարակումը: Վոչ թե հա-  
մողված սոցիալ-դեմոկրատներին քաղաքից գյուղը հետ  
կանչելու համար, վոչ թե նրանց գյուղի հետ կապելու հա-  
մար պիտի մենք մեր ծրագրի մեջ մտցնենք գյուղացիական  
պահանջներ, —վոչ, այլ գործունեություն դեկավարություն  
տալու համար այն ուժերին, վորոնք չեն կարող իրենց հա-  
մար գործադրություն գտնել այլ կերպ, քան գյուղում,  
վորպեսզի դեմոկրատիայի և հանուն ազատություն մղվող  
քաղաքական պայքարի գործի համար ոգտագործենք այն  
կապերը գյուղի հետ, վորոնք հանդամանքների բերումով  
ունեն սոցիալ-դեմոկրատիային նվիրված ինտելիգենտներից  
ու բանվորներից շատերը և վորոնք ըստ անհրաժեշտություն  
ընդարձակվում և աճում են շարժման աճման հետ միասին:  
Մենք վաղուց արդեն աճել անց ենք կացել այն ստադիան,  
յերբ մենք կամավորների մի փոքրիկ շոկատ ելինք, յերբ  
սոցիալ-դեմոկրատական ուժերի ամբողջ պահեստն սպառ-  
վում եր յերիտասարդության խմբակներով, վորոնք գլխո-  
վին «դեպի բանվորներն ելին գնում»: Մեր շարժումն այժմ  
ունի մի ամբողջ բանակ, բանվորների բանակ, վորոնց շո-  
չափել է սոցիալիզմի ու ազատության համար մղվող պայ-  
քարը, —ինտելիգենտների բանակ, վորոնք մասնակցել են ու  
մասնակցում են շարժմանը և այժմ արդեն ցրված են Ռու-  
սաստանի բոլոր ծայրերում, —համակրողների բանակ, վորոնք  
հավատով ու հուսով են նայում բանվորական շարժմանը և  
պատրաստ են հաղարավոր ծառայություններ մատուցելու  
նրան: Յեվ մեր առջև ծառայած է մի մեծ խնդիր, —կազ-

մակերպել բոլոր այդ բանակները, կազմակերպել այնպես,  
վոր մենք ընդունակ լինենք վոչ միայն թուրքիկ բռնկում-  
ներ ստեղծելու, վոչ միայն թշնամուն պատահական, ան-  
ջատ-անջատ (այս պատճառով ևլ անխտանգ) հարվածներ  
հասցնել, այլ հետապնդել թշնամուն անշեղ, համառ և տո-  
կուն պայքարով ամբողջ գծի վրա, հալածել ինքնակալական  
կառավարությունն ամենուրեք, ուր նա կեղեքում է սերմա-  
նում և ատելություն հնձում: Իսկ միջին կարելի յե հասնել  
այս նպատակին, յեթե դասակարգային պայքարի և քաղա-  
քական դիտակցություն սերմեր չտարածվեն գյուղացիու-  
թյան բաղձամիլիոն մասսայի մեջ: Յեվ մի՛ անք, թե դա-  
դափարների նման տարածումն անհնարին է. այն վոչ մի-  
այն հնարավոր է, այն արդեն կատարվում է, այն ընթա-  
նում է հազարավոր ուղիներով, վորոնք վրիպում են մեր  
ուշադրությունից և մեր ներգործությունից: Այն կընթանա  
անչափորեն ավելի լայն ու արագ, յեթե մենք կարողանանք  
լողուեզ տալ նման ներգործության համար և պարզենք խայ-  
տառակ ճորտատիրական իրավունքի բոլոր մնացորդներից  
ուսու գյուղացիություն ազատագրություն դրոշակը: Քաղաք  
յեկող գյուղացի մարդն այժմ իսկ արդեն հետաքրքրու-  
թյամբ և ուշադրությամբ է դիտում իր համար անհասկա-  
նայի այն պայքարը, վոր բանվորներն են մղում, և այդ  
մասին լուր է տարածում բոլոր հետ ընկած անկյուններում:  
Մենք կարող ենք և պետք է հասնենք այն բանին, վոր կողմ-  
նակի դիտողների այդ հետաքրքրությունը փոխվի յեթե  
վոչ կատարյալ բմբունումով, ապա գոնե աղոտ դիտակցու-  
թյամբ այն բանի, վոր բանվորները պայքարում են ամբողջ  
ժողովրդի շահերի համար, փոխվի ավելի ու ավելի մեծ  
համակրություն դեպի նրանց պայքարը: Յեվ այն ժամա-  
նակ—հեղափոխական բանվորական կուսակցություն հաղ-  
թություն ուր վոստիկանական կառավարության վրա՝  
կմոտենա մեզ համար անսպասելի անակնկալ արագու-  
թյամբ:

«Искра» № 3, 1901 г. արիլ:

Այսպես կոչված գյուղացիական ուժերով հիսնամյակը հետաքրքրական շատ հարցեր և հարուցում: Գրանցից այսպես մենք կարող ենք շոշափել միայն մի քանի տնտեսական ու պատմական հարցեր, բառիս ավելի նեղ խմատով հրապարակախոսական թեմաները թողնելով մինչև մի այլ առիթ:

Սրանից 10—15 տարի առաջ, յերբ նարոզնիկները և մարքսիստների միջև յեղած վեճերն<sup>5</sup> առաջին անգամ դուրս բերվեցին լայն հասարակութան առաջ, այսպես կոչված գյուղացիական ուժերով գնահատութան վերաբերյալ տարակարծութունն այդ վեճում քանիցս գրավել և առաջին տեղերից մեկը: Նարոզնիկութան տեսարանների, — որինակ, հայանի պ. Վ. Վ. — և կամ Նիկոլայ — ունի համար, — 1861 թ. գյուղացիական ուժերով հիմունքներն իրենցից ներկայացնում էին ինչ—վոր կապիտալիզմից սկզբունքորեն տարբեր և նրան սկզբունքորեն թշնամի մի բան: Նրանք խոսում էին այն մասին, վոր փետրվարի 19—ի Կանոնադրութունը<sup>6</sup> որինականացնում էր «արտադրողին արտադրութան միջոցներ բաժին հանելը», սանկցիա յեր տալիս «ժողովրդական արտադրութանը» ի տարբերության կապիտալիստականից: Փետրվարի 19—ի Կանոնադրութան մեջ նրանք տեսնում էին Ռուսաստանի վոչ—կապիտալիստական եվոլյուցիայի յերաշխիքը:


Այս թեորիային մարքսիստներն այն ժամանակ արդեն հակադրում էին սկզբունքորեն այլ հայացք: Փետրվարի 19—ի Կանոնադրութունը արտադրութան ճորտատիրական (կամ ֆեոդալական) յեղանակը բուրժուականով (կապիտա-

լիստականով) փոխվելու եպիգոդներից մեկն է: Ըստ այդ հայացքի Կանոնադրութան մեջ չկան վորևէ այլ պատմատնտեսական տարրեր: «Արտադրողին արտադրութան միջոցներ բաժին հանելը» դատարկ սրտատուչ Փրագ է, վորն սքողում է այն պարզ փաստը, վոր գյուղացիները, լինելով մանր արտադրողներ հողագործութան մեջ, դառնում էին առավելապես նատուրալ տնտեսութուն ունեցող արտադրողներից—ապրանքարտադրողներ: Ըստվորում թե վորքան ուժեղ կամ թույլ էր զարգացած հենց այդ ապրանքային արտադրութունը այն դարաշրջանի Ռուսաստանի դա՛նազան վայրերի գյուղացիական տնտեսութան մեջ—դա այլ հարց է: Մակայն անկասկած է, վոր «ազատազրվող» գյուղացին մտնում էր հենց ապրանքային արտադրութան իրադրութան մեջ, և վոչ թե մի վորևէ այլ: «Ազատ աշխատանք» փոխանակ\* ճորտային աշխատանքի՝ այդպիսով նշանակում էր վոչ այլ բան, քան վարձու բանվորի կամ մանր ինքնուրույն արտադրողի ազատ աշխատանքը՝ ապրանքային արտադրութան պայմաններում, այսինքն՝ բուրժուական հասարակական—տնտեսական հարաբերությունների մեջ: Փրկագիմը ավելի ևս ուլյեֆ կերպով է ընդգծում ուժերով այդպիսի բնույթը, վորովհետև փրկագիմը խթանում է գրամական տնտեսութանը, այսինքն՝ ուժեղացնում է գյուղացու կախումը շուկայից:

1632  
40

Գյուղացիները՝ հողով հանդերձ ազատազրվելու մեջ նարոզնիկները տեսնում էին վոչ—կապիտալիստական սկզբունք, «սկիզբն» այն բանի, ինչ նրանք անվանում էին «ժողովրդական արտադրութուն»: Գյուղացիները՝ առանց հողի ազատազրվելու մեջ նրանք տեսնում էին կապիտալիստական սկզբունք: Այդպիսի հայացքը նարոզնիկները (մանավանդ պ. Նիկոլայ — ունը) հիմնում էին Մարքսի ուսմունքի վրա, վկայակոչելով այն, վոր աշխատավորին արտադրութան միջոցներից ազատազրելը արտադրութան կապիտալիստական յեղանակի հիմնական պայմանն է: Որի-

\* Վորչափով իրականում այդպիսի փոխարինում տեղի յեր ունենում, ստորև մենք կանանենք, վոր այդ փոխարինումը կատարվում էր անհամեմատ ավելի բարձր ձևով, քան կարող էր թվալ առաջին հայացքից:



զինալ յերևույթ՝ արդեն սկսած 80-ական թվականներից (յեթե վոչ ավելի վաղ) մարքսիզմն այնպիսի անվիճելի, փաստորեն անխաղաղ ուժ էր Արևմտյան Յեվրոպայի առաջավոր հասարակական ուսմունքների մեջ, վոր Ռուսաստանում մարքսիզմին թշնամի տեսութունները յերկար ժամանակ չէին կարողանում բացահայտ կերպով հանդես գալ մարքսիզմի դեմ: Այդ թեորիաները սոփեստականացնում էին, կեղծում էին (հաճախ անդիտակցարար) մարքսիզմը, այդ թեորիաները կարծես թե իրենք կանգնում էին մարքսիզմի հողի վրա և «ըստ Մարքսի» ջանում էին հերքել Մարքսի թեորիայի կիրառումը Ռուսաստանի նկատմամբ: Պ. Նիկոլայ — ունի նարոչնիկության թեորիան «մարքսիստական» կոչվելու հավանություն ուներ (1880—1890-ական թվերը), իսկ հետագայում պ. պ. Սարուվեյի, Տուզան-Բարանովսկու և Ընկ լիբերալ-բուրժուական թեորիան սկսում էր «գրեթե» Մարքսի լիակատար ընդունումից, յուր հայացքները զարգացնելով, յուր լիբերալիզմն անցկացնելով մարքսիզմի «հետագա քննադատական զարգացման» կեղևի տակ: Ռուսական հասարակական թեորիաների զարգացման այդ յուրատեսակ գծի վրա սկսած XIX դարի վերջից (և ընդհուպ մինչև արդի ոպորտունիզմը — ինկլիդատորությունը<sup>8</sup>, վոր հակա-մարքսիստական բովանդակությունը սքողելու համար կառչում է մարքսիստական տերմինաբանությունը), հավանորեն, մի անգամ չէ, վոր հարկ կլինի մեկ կանգ առնելու:

Տվյալ մոմենտին մեկ հետաքրքրում է «մեծ ուժորմի» նարոչնիկական վնահատականը: Արմատապես սխալ է այն հայացքը, թե գյուղացիներին 1861 թվին հողազուրկ անելու ձգտումը յեղել է կապիտալիստական ձգտում, իսկ նրանց հողաբաժին տալու ձգտումը — հակա-կապիտալիստական, սոցիալիստական (նարոչնիկներից լավագույնները «ժողովրդագական արտադրություն» տերմինի տակ տեսնում էին սոցիալիզմի՝ գրաֆննական արգելքների կողմից հրամցված կեղծանունը): Այդպիսի հայացքը մեղանշում է աղաղակող հակա-պատմականությամբ, Մարքսի «պատրաստի» Փորմուլայի («Փորմուլայի», վոր կիրառելի չէ միայն բարձր

զարգացման հասած ապրանքային արտադրության նկատմամբ) փոխադրումով՝ նորատիրական հողի վրա: Իրականում գյուղացիների հողազրկումը 1861 թվին առավելապես նշանակում էր վոչ թե ազատ բանվորի ստեղծում կապիտալիստական արտադրության մեջ, այլ ստրկացած (այսինքն՝ փաստորեն կիսաճորտ կամ անգամ գրեթե ճորտ) վարձակալի ստեղծում այդ նույն «աղայական», կալվածատիրական հողի համար: Իրականում 1861 թվի «հողաբաժինները» առավելապես նշանակում էին վոչ թե ազատ ինքնուրույն հողագործի ստեղծում, այլ ստրկացած վարձակալի ամրացումը հողին, վորը փաստորեն հարկազրկված է կրել նույն այդ կողը, յուր ինվենտարով մշակելով կալվածատիրոջ հողը՝ արածացնելու համար, արոտատեղի համար, մարդադետնի համար, անհրաժեշտ վարելահողի համար և այլն:

Վորչափով գյուղացին իրապես, և վոչ թե սոսկ անվանապես, ազատագրվում էր ճորտատիրական հարաբերություններից (դրանց եյությունը «աշխատավճար ունտան է, այսինքն՝ հողաբաժին ստացած գյուղացու աշխատանքը կալվածատիրոջ համար), այնչափով նա մտնում էր բուրժուական հասարակական հարաբերությունների իրադրության մեջ: Սակայն ճորտատիրական հարաբերություններից այդ իրապես ազատագրվելը կատարվում էր անհամեմատ ավելի բարդ ձևով, քան նարոչնիկներն էին կարծում: Հողազրկման կողմնակիցների և «հողաբաժին աալու» կողմնակիցների պայքարն այն ժամանակ արտահայտում էր հաճախ սոսկ յերկու նորատիրական լազերների՝ պայքարը, այն վեճը, թե արդյոք կալվածատիրոջ համար ավելի ձեռնտու չէ ունենալ վարձակալ (կամ «աշխատավճարային» գյուղացի)՝ ամենևին առանց հողի, թե «հողաբաժնով», այսինքն՝ այնպիսին, վորն ամբացված է տեղին, կապված է մի կտոր հողով, վորն ապրուստ չի տալիս և վորի վրա հարկ է լինում «վաստակներ» փնտուել (— գնալ դառնալ կալվածատիրոջ ստրուկը):

Յեվ, մյուս կողմից, անկասկած է, վոր վորքան ավելի շատ հող ստանային գյուղացիներն ազատագրման ժամա-

նակ, վորքան ավելի եժան ստանային նրանք այդպիսին, այնքան ավելի արագ, լայնորեն ու ազատ կընթանար կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, այնքան ավելի արագ կանհետանային ճորտատիրական ու ստրկային հարաբերութիւնները մնացորդները, այնքան ավելի նշանակելի կլինէր ներքին շուկան, այնքան ավելի ապահովված կլինէր քաղաքների, արդյունաբերութեան ու առևտրի զարգացումը:

Նարոզնիկների սխալն այն էր, վոր նրանք հարցը վերցնում էին ուտոպիորեն, վերացականորեն, կոնկրետ պատմական իրադրութիւններից անկախ, դուրս: Նրանք «հողաբաժինը» հայտարարում էին ինքնուրույն մանր հողագործութեան բազա՝ վարչափով այդ ճիշտ է, այնչափով «հողաբաժին ստացած» գյուղացին դառնում էր ապրանքարտադրող, ընկնում էր բուրժուական պայմանների մեջ: Իսկ իրականում շատ հաճախ «հողաբաժինը» լինում էր այնքան փոքր, այնքան ծանրաբեռնված չափից դուրս վճարումներով, բաժնեհատված այնքան անհաջող՝ գյուղացու համար և «հաջող»՝ կալվածատիրոջ համար, վոր «հողաբաժնային» գյուղացին անխուսափելիորեն ընկնում էր անելանելի ստորկական դրութեան մեջ, փաստորեն մնում էր ճորտատիրական հարաբերութիւնների մեջ, աշխատավճարում էր նույն կողմ (վորպես վարձակալութիւն՝ աշխատավճարումների միջոցով հատուցելով և այլն):

Այդպիսով նարոզնիկութիւնը կրում էր յերկակի տեսնուդէնց, վորը և մարքսիստները բնութագրեցին հենց այն ժամանակ, խոսելով լիբերալ-նարոզնիկական հայացքների, լիբերալ-նարոզնիկական դեմահատականի մասին և այլն: Վորչափով նարոզնիկները դուռնադարձում էին 1861 թվի ռեֆորմը, մոռանալով այն մասին, վոր «հողաբաժին տալը» իրապես առավելապես նշանակում է կալվածատիրական տնտեսութիւնների ապահովում եժան և վայրին ամրացված բանվորական ձեռքերով, եժան ստրկական աշխատանքով, այնչափով նրանք իջնում էին (հաճախ այդ չդիտակցելով) մինչև լիբերալիզմի տեսակետը, մինչև լիբերալ բուրժուային, կամ մինչև անգամ լիբերալ կալվածատիրոջ տեսակե-

տը.—այնչափով նրանք որչեղտիւրեն դառնում էին կապիտալիստական եւոլուցիայի այնպիսի տիպի պաշտպաններ, վորն ամենից շատ և կրում կալվածատիրական արագիւններ, ամենից շատ և կապված ճորտատիրական անցյալի հետ, ամենից ավելի դանդաղ, ամենից ավելի դժվար և ազատագրվում նրանից:

Իսկ վորչափով նարոզնիկները, չընկնելով Յէթի ռեֆորմի իդեալաւիզացման մեջ, ջերմադին ու անկեղծաբար պաշտպանում էին նվազագույն վճարումները և ամենամեծ՝ առանց վարքի սահմանափակման՝ «հողաբաժինները», գյուղացու ամենամեծ կուլտուրական, իրավական և այլն ինքնուրույնութեամբ հանդերձ, այնչափով նրանք, բուրժուական դեմոկրատներ էին: Նրանց միակ պակասութիւնն այն էր, վոր նրանց դեմոկրատիզմը բնավ միշտ չէր հետևողական ու վճռական, ընդվորում նրա բուրժուական բնույթը մնում էր նրանց կողմից չդիտակցված: Մեզանում, իմիջի այլոց ասած, անգամ մինչև այժմ էլ ամենից «ձախ» սոցիալ-նարոզնիկները շատ անգամ «բուրժուական» բառը հասկանում են նշված կապակցութեամբ, ինչպես ինչ-վոր... «քաղաքականութեան» նման մի բան, այնինչ իրոք բուրժուական դեմոկրատիա տեղմինը, մարքսիզմի տեսակետից, միակ ճշգրիտ գիտական բնորոշումն է:

Այդ յերկակի, լիբերալ ու դեմոկրատական, տեսնուդէնցը նարոզնիկութեան մեջ լիովին պարզ ուրվագծվեց արդեն 1861 թվի ռեֆորմի եպոխայում: Մենք չենք կարող այստեղ ավելի մանրամասնորեն կանգ առնել այդ տեսնուդէնցների վերլուծութեան վրա, մասնավորապես ուտոպիական սոցիալիզմի՝ կապի վրա գրանցից յերկրորդի հետ, և կսահմանափակվենք, ասենք՝ մի կողմից կալվելինի և մյուս կողմից Չերնիշևսկու դարափարական-քաղաքական ուղղութիւնների տարբերութեան պարզ նշումով:

Յէթի մի ընդհանուր հայացք նետենք ուսաստանյան պետութեան ամբողջ կառուցքի փոփոխութեան վրա 1861 թվին, ապա անհրաժեշտ է ընդունել, վոր այդ փոփոխութեանը յեղել է մի քայլ Ֆեոդալական միապետութեանը բուրժուական միապետութեան վերածելու ուղղութեամբ: Այդ

ճիշտ և վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տնտեսական իրադարձությունների մեջ, ազգայնականության, վարչութայն, տնտեսական ինքնավարութայն բնազավառում կատարված օրինակները և 1861 թվի գյուղացիական օրենքին հաջորդած նման այլ օրենքների բնույթը, — համոզվելու համար այդ դրույթյան ճիշտ լինելու մեջ: Կարելի չէ վիճել այն մասին, թե մեծ կամ փոքր, արագ կամ դանդաղ և յեղել այդ «քայլը», սակայն այն ուղղությունը, վորնով կատարվել է այդ քայլը, այնքան պարզ է և այնքան է պարզված հետագա բոլոր անցքերի միջոցով, վոր նրա մասին հազիվ թե յերկու կարծիք լինի: Իսկ այդ ուղղությունն անհրաժեշտ է ընդգծել այնքան ավելի, վորքան հաճախակի յեն մեր ժամանակներում լավում չմտածված դատողություններ այն մասին, թե իբր Ռուսաստանը բուրժուական միապետություն դառնալու ուղիով «քայլեր» և անում մինչև անգամ ամենավերջին տարիներում:

Նարոդնիկությունը նշված յերկու տեսլանքներից՝ դեմոկրատականը, վոր հենվում է վոչ կարվածատիրական, վոչ չինովնիկական և վոչ բուրժուական շրջանների գիտակցականության ու ինքնազործունեյություն վրա, 1861 թվին խիստ թույլ էր: Այդ պատճառով էլ բանը բուրժուական միապետության վերածվելու ուղիով ամենավորը «քայլից» դենը չգնաց: Սակայն այդ թույլ տեսլանքը գոյություն ուներ արդեն այն ժամանակ: Նա հանդես էր գալիս նաև հետագայում, մերթ ավելի ուժեղ, մերթ թույլ, ինչպես հասարակական գաղափարների վորոտում, այնպես էլ ամբողջ հեռուֆորմյան դարաշրջանի հասարակական շարժման վորոտում: Այդ տեսլանքն աճում էր այդ դարաշրջանի յուրաքանչյուր տասնամյակում, սնվելով յերկրի տնտեսական եվոլյուցիայի յուրաքանչյուր քայլով, իսկ հետևաբար և սոցիալական, իրավական, կուլտուրական պայմանների միակցությունը:

Գյուղացիական օրենքից 44 տարի հետո՞ թե մեկ, թե մյուս տեսլանքը, վորոնք 1861 թվին միայն ուրվադժվել էին, իրենց բավականին լիակատար և բացահայտ արտահայտությունը գտան հասարակական կյանքի ամենազանա-

զան ասպարեզներում, հասարակական շարժման դանդաղ իրադարձությունների մեջ, ազգայնականության լայն դանդախներին և խոշոր քաղաքական կուսակցությունների դործունեյություն մեջ: Կաղեմներն ու տրուդովիկները՝ և մյուս տերմինը հասկանալով ամենալայն իմաստով — արդեն սրանից կես դար առաջ ուրվադժված այդ յերկու տեսլանքների ուղղակի սերունդներն ու հաջորդներն են, դրանց անմիջական կենսազործողները: 1861 թվի և 44 տարի հետո ծավալված դեպքերի միջև յեղած կապն անկասկած է ունենում: Յեվ այն հանգամանքը, վոր կես դարի ընթացքում յերկու տեսլանքներն էլ կենդանի յեն մնացել, ամբողջացել, զարգացել, աճել, անվիճելիորեն վիպյում է այդ տեսլանքների ուժի մասին, այն մասին, վոր նրանց արմատները խոր են ընկած Ռուսաստանի ամբողջ տնտեսական կառուցվածքի մեջ:

Նույնվրեմյակյան գրող Մենչիկովը գյուղացիական օրենքի այդ կապը մոտակա անցյալը դեպքերի հետ՝ արտահայտել է հետևյալ յուրակերպ տիրապայի մեջ՝ «61 թվականը չկարողացավ կանխել իննհարյուր հնգին, — հետևաբար, էլ ինչո՞ւ աղմկել մի օրենքի մեծությամբ մասին, վորն այդքան խոճուկ կերպով տապալվեց» («Новое Время», № 12512, հունվարի 11, «Неужный юбилей»):

Մենչիկովն այդ խոսքերով անակնկալորեն շոշափել է չափազանց հետաքրքրական դիտարկումական հարց, նախ, օրենքի ու հեղափոխության հարաբերակցության վերաբերյալ ընդհանրապես, և յերկրորդը, 1861 և 1905—1907 թվականների հասարակական-պատմական ուղղությունների, ձգտումների, տեսլանքների՝ կապի, կախման, ազդակցության վերաբերյալ:

Ռեֆորմի հասկացողությունն, անկասկած, հակադիր է հեղափոխության հասկացողությանը. այդ հակադրություն մոռացումը, այն յեղրի մոռացումը, վորը բաժանում է յերկու հասկացողությունը, շարունակ տանում է դեպի ամենալուրջ սխալները բոլոր պատմական դատողություններում: Սակայն այդ հակադրությունը բացարձակ չէ, այդ յեզրը մեռած չէ, այլ կենդանի, շարժական յեզր է, վոր-

պիսին պետք է կարողանալ վորոշել յուրաքանչյուր առան-  
ձին կոնկրետ դեպքում : 1861 թվի օկտոբրեմ մնաց սուկ օկ-  
տոբրեմ չնորհով այն հասարակական տարրերի ծայրատիճան  
թուլութեան, անդիտակցութեան, ցարդացրիվութեան, վո-  
րոնց շահերը պահանջում էյին բարեփոխութեաններ :

Գրանից է, վոր ճորտատիրական դժերն այնքան ուժեղ  
էյին այդ օկտոբրեմում, դրանից է, վոր նրանում այդքան  
չատ է բյուրոկրատիկ-այլանդակը, դրանից է, վոր այն-  
քան մեծ էյին այն թշվառութեանները, վոր նա պատճառեց  
դյուրացրիվութեանը : Մեր դյուրացրիվութեանն անհամեմատ  
ավելի շատ տառապում էր կապիտալիզմի անբավարար դար-  
գացումից, քան կապիտալիզմից :

Սակայն այդ օկտոբրեմը, վորը օկտոբրեմ մնաց վորոշ հա-  
սարակական տարրերի թուլութեան հետեանքով, չնայած  
բոլոր խոչընդոտներին ու արգելքներին, պայմաններ ստեղ-  
ծեց այդ տարրերի հետագա զարգացման համար, — պայման-  
ներ, վորոնք ընդլայնեցին այն ըստան, վորի վրա հին հա-  
կասութեանը բորբոքվում էր, ընդլայնեցին արգարենակու-  
թեան այն խմբակները, խավերի, դասակարգերի շրջանը,  
վորոնք կարող էյին դիտակցորեն մասնակցել այդ հակասու-  
թեանների «բորբոքման» գործին : Ուստի դուրս յեկավ այն-  
պես, վոր 1861 թվի օկտոբրեմ լիբերալիզմին դիտակցորեն  
թշնամի դեմոկրատական տենդենցի ներկայացուցիչները,  
վորոնք այն ժամանակ (և դրանից հետո յերկար ժամանակ)  
նման էյին անհող միայնակներին, իրականում դարձան ան-  
չափորեն ավելի «հող ունեցող», — դարձան այն ժամանակ,  
յերբ հասունացան 1861 թվին գրեթե սաղմնային վիճակում  
գտնվող հակասութեանները : 1861 թվի օկտոբրեմ այն մաս-  
նակիցները, վորոնք նրա վրա նայում էյին օկտոբրիստա-  
կան տեսակետից, դուրս յեկան ավելի «հող ունեցող», քան  
լիբերալ օկտոբրիստները : Պատմութեանն ընդմիջտ կապահ-  
արանի առաջինների հիշատակը, ինչպես դարաշրջանի առա-  
ջավոր մարդկանց, — յերկրորդներինը, ինչպես հնի և իր  
զարն անցկացրածի ուժերի հանդեպ՝ կիսակատար, անհաս-  
տատակամ, անդր մարդկանց :

Նարոզներինը միշտ իրենց թեորիաներում՝ սկսած

1861 թվից (իսկ նրանց նախորդներն ավելի էս վաղ, մինև  
1861 թվականը) և այնուհետև ավելի քան կես դարի ըն-  
թացքում, զարդում էյին այլ, այսինքն՝ վոչ-կապիտալիս-  
տական, ուղի Ռուսաստանի համար : Պատմութեանը լիովին  
հերքեց նրանց այդ սխալը : Պատմութեանը լիովին ապա-  
ցուցեց, — և 1905—07 թվերի դեպքերը, ռուսական հասարա-  
կութեան դանազան դասակարգերի յիլույթներն այդ ժամա-  
նակ առանձնապես ակնբախորեն հաստատեցին, — վոր Ռու-  
սաստանը զարգանում է կապիտալիստորեն և վոր չի կարող  
լինել այլ ճանապարհ նրա զարգացման համար : Սակայն  
վատ կլինեի այն մարքսիստը, վորը կետարյան այդ իսկ  
պատմութեանից չեր սովորի մինչև այժմ այն, ինչում կա-  
յանում էր այդ հայրենիքի համար «այլ» ուղի իրադրոճելու  
սխալ իդեոլոգիայի մեջ պարուրված կետարյան ձգտումնե-  
րի ռեալ նշանակութեանը :

1861 թվի համեմատութեանը 1905—07 թվերի հետ  
հստակ ու պարզ ցույց է տալիս, վոր նարոզներինիկական իդեո-  
լոգիայի այդ ռեալ պատմական նշանակութեանը կայանում  
էր կապիտալիստական դարգացման յերկու ուղիների հակա-  
դրման մեջ՝ մեկ ուղու, վորը նոր, կապիտալիստական  
Ռուսաստանը հարմարեցնում է հին, առաջինը յենթարկում  
է յերկրորդին, դանդաղեցնում է զարգացման ընթացքը, —  
և մյուս ուղու, վորը հինը փոխարինում է նորով, լիովին  
վերացնում է նորի՝ իրենց դարն ապրած խոչընդոտները,  
արդարացնում է զարգացման ընթացքը : Կազեաների ու  
տրուդովիկների ծրագրերը, իբրև լիբերալ ու դեմոկրատա-  
կան ծրագրեր — իրենց անհետեղականութեամբ հանդերձ,  
յերբեմն յերկու ծրագրերի էլ խճճվածութեամբ ու անդի-  
տակցութեամբ — ցայտունորեն արտահայտել են ռեալ ուղի-  
ների այդ զարգացումը, ուղիների, վորոնք յերկուսն էլ  
գտնվում են կապիտալիզմի շրջանակներում, վորոնք անչե-  
ղորեն կենսադրոճվում են ավելի քան կես դարի ժամանա-  
կարնթացքում :

Յեվ այժմյան դարաշրջանն առանձնապես հրամայաբար  
պահանջում է մեղնից հատարեն լմբռնել մեկ և մյուս  
ուղիների պայմանները, պարզ պատկերացնել 1861 թվի  
յերկու տենդենցները և նրանց հետագա զարգացումը : Մենք

ապրում ենք ռուսաստանյան պետության ամբողջ կառուցքի հետագա տեղաշարժ, ևս մեկ քայլ բուրժուական միապետության վերածվելու ուղիով: Այդ նոր քայլը, նույնքան անխտաս, նույնքան տատանվող, նույնքան անհաջող, նույնքան սնանկ, առաջվա նման, մեր հանդեպ դնում է հին հարցերը: Թե Ռուսաստանի կապիտալիստական դարձացման յերկու ուղիներից վոր մեկը վերջնականապես կվորոշի նրա բուրժուական կառուցքը, պատմությունը դեռ չի լուծել այդ տակավին իրենց չեն սպառել այն որոշելով ուժերը, վորոնցից կախված է լուծումը: Հնարավոր չե նախատեսել, թե ինչպիսի կլինի այդ լուծումը նախապես մինչև բոլոր բաղխումների, ընդհարումների, կոնֆլիկտների վորձը, վորոնք կաղմում են հասարակության կյանքը: Հնարավոր չե առաջուց նախատեսել, թե ինչպիսի կլինի այն յերկու տեսլենցների համադրը, վորոնք իրենց զգալ են տալիս սկսած 1861 թվից: Մահայն կարելի յե—և պետք է—հասնել մեկ և մյուս տեսլենցի պարզ գիտակցմանը, հասնել այն բանին, վորպեսզի մարքսիստները (և դրանում է նրանց խնդիրներից մեկը, իրրև «հեղեմոնները»<sup>12</sup> տրոհման, ցրիվության, թերահավատության և բուրժուական հանդուժյան առաջ խոնարհվելու քառսի մեջ) իրենց դործունեյությունը մացնեն—այդ համադրի մեջ—վոչ թե իրրև մինուս (ինչպես լիկվիդատորությունը և ընդհանրապես ամեն մի անողնական քաշ դալը այս կամ այն անկումային տրամադրության հետևից), այլ իրրև պլյուս, իրրև ամբողջությամբ առած վորջ կոլուցիայի շահերի, նրա արմատական ու ամենաեյական շահերի սրաշտպանություն:

Դեմոկրատական տեսլենցի ներկայացուցիչները դնում են դեպի իրենց նպատակը, շարունակ տատանվելով և կախման մեջ ընկնելով լիբերալիզմից: Այդ տատանումներին հակադրելը, այդ կախման վորջնացումը—մարքսիզմի և կալեոբրադույն պատմական խնդիրներից մեկն է Ռուսաստանում:

«Мысль» № 2, 1911 թ. փետրվար:

1911 թ. փետրվարի 19-ին լրանում է 50 տարի՝ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի անկման որից: Ամենուրեք պատրաստություն են տեսնում տոնելու այդ հորեյանը: Յարական կառավարությունը միջոցներ է ձեռք առնում, վորպեսզի յեկեղեցիներում ու դպրոցներում, դորանոցներում ու հրատարակային ընթերցումների ժամանակ քարոզվեն բացառապես սեհարյուրյակային հայացքներ այսպես կոչված՝ գյուղացիների «ազատագրության» մասին: Պետերբուրգից շտապ կերպով շրջաբերականներ են ուղարկվում դեպի Ռուսաստանի բոլոր կողմերն այն մասին, վորպեսզի ամենքը և բոլոր տեսակի հիմնարկները ժողովրդի մեջ տարածելու համար դուրս չդրեն վորեև այլ դրքեր ու բրոշյուրներ, բացի «Ազգային ակումբի»<sup>13</sup>, այսինքն՝ յերրորդդումայական ամենառեակցիոն կուսակցություններից մեկի՝ կողմից հրատարակվող դրականությունից: Ձերմեռանդ նահանգապետները միքանի տեղ արդեն հասել են մինչև այնտեղ, վոր ցրում են գյուղացիական «ռեֆորմի» հորեյանի տոնակատարման համար՝ վոստիկանական «ղեկավարությունից» անկախ հիմնադրված (որինակ, գեմստոյային) կոմիտեները,—ցրում են, վորովհետև այդպիսիները բավականաչափ պատրաստ չեն այդ տոնակատարությունն անցկացնելու այնպես, ինչպես սրահանջում է սե հարյուրյակի կառավարությունը<sup>14</sup>:

Կառավարությունն անհանդատանում է: Նա տեսնում է, վոր ինչքան ել խեղճ, ահարեկված, անդիտակից ու աղետ լինի այս կամ այն բանվորը կամ գյուղացին, այդուհան-

դերձ հասարակ վերհիշումն այն բանի, վոր սրանից կես դար առաջ հայտարարվել է ճորտատիրական իրավունքի վերացումը, չի կարող չչարժել, չհուզել ժողովրդին, վորը ճնշված է կալվածատիրական, աղայական Գուճայով<sup>15</sup>, վորն առաջմանից ավելի յե տառապում ճորտատեր կալվածատերերի և նրանց վոստիկանութան ու չինովնիկների կամակորուժյունից, բռնությունից ու ճնշումից:

Արևմտյան Յեվրոպայի պետություններում ճորտատիրական իրավունքի վերջին մնացորդները վոչնչացվեցին, Ֆրանսիայում՝ 1789 թվի և մնացած յերկրներից մեծ մասում՝ 1848-ի հեղափոխություններով: Ռուսաստանում, հարյուրավոր տարիներ կալվածատիրական ստրկության մեջ դռնված ժողովուրդը 1861 թվին ի վիճակի չէր յենելու լայն, բացահայտ, դիտակցական պայքարի՝ աղատության համար: Այն ժամանակվա գյուղացիական ընդվզումները մնացին միայնակ, ցաքուցրիվ, տարերային «բունտեր», և այդպիսիները հեղտությամբ ճնշում էլին: Ճորտատիրական իրավունքի վերացումն իրագործվեց վոչ թե ապստամբած ժողովրդի, այլ կառավարության կողմից, վորը Ղրիմի պատերազմում<sup>16</sup> պարտություն կրելով զբաց ճորտատիրական կարգերի պահպանման լիակատար անհնարինությունը:

Ռուսաստանում գյուղացիներին «ազատագրում էլին» իրենք կալվածատերերը, ինքնակալ ցարի կալվածատիրական կառավարությունն ու նրա չինովնիկները: Յեվ այդ «ազատարարները» դործն այնպես տարան, վոր գյուղացիներն «ազատվեցին» մինչև աղքատության ատիճանի թալանված, դադարեցին կալվածատերերի ճորտը լինելուց, ստրկացան նույն այդ կալվածատերերի ու նրանց դրածու մարդկանց մոտ:

Պարոնայք աղնվատուհմ կալվածատերերը ունս գյուղացիներին «ազատագրում էլին» այնպես, վոր գյուղացիական հողի ավելի քան հինգերորդ մասը կարվեց հոգուտ կարվածատերերի: Իրենց, քրտինքով ու արյունով վողողված, գյուղացիական հողերի համար գյուղացիները պարտավոր էլին յերեկվա ստրկատերերին վճարել փրկագին, այսինքն՝

ԽՈՒՐԲ: Հարյուրավոր միլիոն ուրբլիներով այդ տուրքը գյուղացիները վճարեցին ճորտատերերին, շարունակ ավելի ու ավելի քաջաջվելով: Կալվածատերերը վոչ միայն թալանեցին գյուղացիական հողը, վոչ միայն գյուղացիներին տվին վատթարագույն, յերբեմն բոլորովին անպետք հող, այլև ամեն քայլափոխում թակարդներ բարեցին, այսինքն՝ հողն այնպես բաժանեցին, վոր գյուղացիներին չմնաց յերբեմն արուտ, յերբեմն մարդադեղին, յերբեմն անտառ, յերբեմն անասունի ջրելատեղ: Բուն Ռուսաստանի նուսանդների մեծ մասում գյուղացիները ճորտատիրական իրավունքի վերացումից հետո էլ մնացին նախկին անելանելի ստրկական կախման մեջ կալվածատերերից: Գյուղացիներն ազատագրումից հետո էլ մնացին վորպես «ստորին» դաս, հարկատու հայվան, սև վոսկր, վորին ծաղրում էր կալվածատերերի կողմից դրված իշխանությունը, քամում հարկերը, ջոթակում ճկպատահարությամբ, ծեծ կերցնում, անպատկառություն անում:

Աշխարհում և վոչ մի յերկրի գյուղացիություն «ազատագրությունից» հետո էլ չի տեսել այնպիսի ամալբուրություն, այնպիսի աղքատություն, այնպիսի ստորացումներ ու այնպիսի ծաղրանք, ինչպես Ռուսաստանում:

Սակայն ճորտատիրական իրավունքի անկումը թափահարեց ամբողջ ժողովրդին, արթնացրեց նրան դարավոր քնից, նրան սովորեցրեց անձամբ յեւք վորոնել, անձամբ պայքար մղել լիակատար աղատության համար:

Ճորտատիրական իրավունքի անկումից հետո Ռուսաստանում ավելի ու ավելի արագ զարգանում էլին քաղաքները, աճում էլին Փարրիկաններն ու դործարանները, կառուցվում էլին յերկաթուղիներ: Ճորտատիրական Ռուսաստանին գալիս էր փոխարինելու կապիտալիստական Ռուսաստանը: Նստակյաց, ընկճված, յուր գյուղին կառչած, տերտերներին հավատացող, «մեծավորից» վախեցող ճորտ գյուղացու փոխարեն հասունանում էր գյուղացիների նոր սերունդ, վորոնք յեղել էլին արտադնաց դրադմունքներում, քաղաքներում, սովորել էլին ինչ-վոր մի բան թափառական կյանքի ու վարձու աշխատանքի դառը փորձից: Խոչոր քաղաքներում, Փարրիկաններում ու դործարաններում բանվոր-



ների թիվը չարունակ ավելանում եր: Հետզհետե սկսեցին կարմալել բանվորների միավորումներ՝ կապիտալիստների դեմ և կառավարութան դեմ միատեղ պայքարելու համար: Մղեւթի այդ պայքարը, ուստի բանվոր դասակարգն ողնում եր միլիտանտոր դյուղացիութանը՝ բարձրանալու, շակվելու, իրենից դեն չարտելու ճորտ ստրուկների սովորութիւնները:

1861 թվին դյուղացիներն ընդունակ ելին միայն «բունտեր» բարձրացնելու: 1861 թվից հետո տասնամյակների ընթացքում ուստի հեղափոխականները հերոսաբար ձգտելով ժողովրդին պայքարի հանելու, մնում ելին մենակ և կործանելում ինքնակալութան հարվածների տակ: Գալով դեպի 1905 թիվը ուստի բանվոր դասակարգն ամբացալ ու աճեց յերկարամյա դործադուլային պայքարում, սոցիալ-դեմոկրատական կուսակցութան կողմից տարվող պրոպագանդայի, ագիտացիայի, կազմակերպման յերկարամյա աշխատանքում: Յեւ նա ամբողջ ժողովրդին տարալ, միլիտանտոր դյուղացիութանը տարալ դեպի հեղափոխութիւն:

Յարական ինքնակալութիւնը կիսարեկից 1905 թվի հեղափոխութեամբ: Այդ հեղափոխութիւնը առաջին անգամ Ռուսաստանում տիրահոջակ ճորտատիրական ստրկութեամբ ճնշված մուսուլմանների ամբոխից ստեղծեց ժողովուրդը, վորն սկսում եր հասկանալ յուր երալունքները, սկսում եր զգալ յուր ուժը: 1905 թվի հեղափոխութիւնն առաջին անգամ ցարական կառավարութեանը, ուստի կալվածատերերին, ուստի բուրժուազիային ցույց տվեց, վոր միլիտանտոր և տասնյակ-միլիոնավոր մարդիկ դառնում են քաղաքացիներ, դառնում են մարտիկներ, չեն թույլ տալիս իրենց դես ու դեն քշել ինչպես անասունի, ինչպես ամբոխի: Իսկ մասսաների իսկական ազատագրումը ճնշումից ու կամայականութիւնից աշխարհում վոչ մի տեղ և յերբեք չի ձեռք բերվել այլ կերպ, քան այդ իսկ մասսաների ինքնուրույն, հերոսական, գիտակցական պայքարով:

1905 թվի հեղափոխութիւնը միայն կիսարեկից, բայց չվոչնչացրեց ինքնակալութիւնը: Նա (ինքնակալութիւնը) հիմա վրեժ է առնում ժողովրդից: Կալվածատիրական Դու-

ման ե'լ ավելի ուժեղ և ճնշում ու խեղդում: Դժգոհութիւնն ու հուրմունքը դարձյալ աճում են ամենուրեք: Առաջին քայլին կհաջորդի յերկրորդը: Պայքարի սկզբին կհաջորդի շարունակութիւնը: 1905 թվի հեղափոխութեան հետևից դալիս և նոր, յերկրորդ հեղափոխութիւնը: Նրա մասին և հիշեցնում, նրա կողմն և կոչում ճորտատիրական իրավունքի անկման հոբելյանը:

Մեզ հարկավոր և «յերկրորդ» փետրվարի 19-ը», նրվնվում են լիբերալները: Ճիշտ չէ: Այդպես են ասում միայն բուրժուական լիախիտները: 1905 թվից հետո անհնարին և յերկրորդ «փետրվարի 19-ը»: Չի կարելի «վերևից ազատագրել» այն ժողովուրդը, վորը սովորել և (և սովորում և կալվածատիրական, III Դումայի փորձի վրա սովորում և) պայքարել ներքևից: Չի կարելի «վերևից ազատագրել» այն ժողովուրդը, վորին գլուխ անցած թեկուզ մեկ անգամ հանդես և յեկել հեղափոխական պրոլետարիատը:

Ահա դյուղացիայինները հատկանում են այդ և այդ պատճառով ել վախենում են 1861 թվի հոբելյանից: «61 թվականը, — գրել և ցարական սև հարյուրյակի հավատարիմ պահապան շունը, Մենչիկովը, «Новое Время» լրագրում, — 61 թվականը չկարողացալ կանխել իմնը հարյուր հնգին»:

Ահա դյուղացիային Դուման և նրա թշնամիների կատաղի հալածանքը ցարական կառավարութեան կողմից չեն կանխում, այլ արագացնում են նոր հեղափոխութիւնը: 1908—1910 թվականների դժվարին փորձը ժողովրդին սովորեցնում և նոր պայքարի: Բանվորների ամառային (1910 թվի) գործադուլների հետևից սկսվեցին ուսանողների ձեռնային գործադուլները: Նոր պայքարն աճում և, — գուցե ավելի դանդաղ, քան մենք կուղենայինք, բայց հաստատորեն, անխուսափելիորեն աճում և:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, իրեն մաքրելով թերահավատներից, վորոնք յերես են դարձրել հեղափոխութիւնից և բանվոր դասակարգի անլեղալ կուսակցութիւնից, հավաքում և յուր շարքերը և համախմբում դալիք մեծ ճակատամարտերի համար:

«Рабочая Газета» № 3,  
1911 թ. փետրվարի 21 (8):

«ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՌԵՅՈՐՄԵՆ» ՈՒ  
ՊՐՈԼԵՏԱՐՈՐԵՆ-ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ  
ՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆՐ

Այն հորեկանը, վորից տեր Ռոմանովների միապետութունն այնքան յերկյուղ եր կրում և վորի առթիվ ուսաստանյան լիբերալներն այնքան սրտառուչ կերպով հուզվում եյին, տոնվեց: Յարական կառավարութունն այն տոնեց նրանով, վոր «ժողովրդի մեջ» յեռանդուն կերպով սաղացնում եր «Աղբային ակումբի» սեհարյուրյակային հորեկանական բրոշյուրները, յեռանդուն կերպով կալանափորում եր բոլոր «կատկածելիներին», արգելում եր այն ժողովները, վորտեղ կարելի չեր սպասել թեկուզ ղեմոկրատականին մի քիչ նման ճառեր, տուգանում ու խեղճում եր լրագրերը, հալածանքի չեր յենթարկում «մտքեր պղտորող» կինեմատոգրաֆները:

Լիբերալները հորեկանը տոնեցին նրանով, վոր նորից ու նորից արցունքներ թափեցին «յերկրորդ» փետրվարի 19-ի» անհրաժեշտության մասին («Вестник Европы»), արտասայտեցին իրենց հավատարիմ հպատակության պղացմունքները (ցարի պատկերը «Речь»-ի առաջին տեղում), խոսք բաց արին իրենց քաղաքացիական վհատության, հայրենի «սահմանադրության» անկայունության մասին, ստուլիպինյան ազրարային քաղաքականության<sup>17</sup> կողմից «հողային վաղեմի հիմունքների» «կործանարար խորտակման» մասին և այլն և այլն:

Նիկոլայ II-ը Ստուլիպինին ուղղած ռեպրիտում<sup>18</sup> հայտարարեց, վոր ստուլիպինյան ազրարային քաղաքականութունը հենց 1861 թվականի փետրվարի 19-ի «մեծ ռե-

ֆորմի» ավարտումն և հանդիսանում, այսինքն՝ դյուղացիական հողը մասնել մի խումբ աշխարհակուլներին, կուլակներին, ունեոր մուժիկներին ալան-թալանին և դյուղը մասնել ճորտատերերի, կալվածատերերի իշխանությանը:

Յեվ պետք և խոստովանել, վոր Նիկոլայ Արյունարբուն, Ռուսաստանի առաջին կալվածատերը, պատմական ճշմարտությանն ավելի յե մոտ, քան մեր չքնադահողի լիբերալները: Առաջին կալվածատերն ու ղլխավոր ճորտատերը միացյալ ազնվականության<sup>19</sup> խորհրդի հրահանգներից ըմբռնեց—ավելի ճիշտ՝ իրեն համար յուրացրեց դասակարգային պայքարի այն ճշմարտությունը, թե ճորտատերերի կողմից կենսազործվող «ռեֆորմներն» իրենց ամբողջ կերպարանքով չեն կարող ճորտատիրական չլինել, չեն կարող ամեն տեսակ բնության ռեժիմով չուղեկցվել: Մեր կադետները, և առհասարակ մեր լիբերալները, վախենում են մասսաների հեղափոխական շարժումից, վորը միմիայն ընդունակ և յերկրի յերեսից ջնջելու ճորտատեր-կալվածատերերին ու նրանց ամեն իշխանությունը ուսական պետության մեջ. և այս յերկյուղը խանդարում և նրանց հասկանալու այն ճշմարտությունը, թե քանի ճորտատերերը տապալված չեն, վոչ մի ռեֆորմ—և մանավանդ ազրարային ռեֆորմ—այլ կերպ հնարավոր չե, քան ճորտատիրական տեսքով, ճորտատիրական բնույթի ու կիրառման յեղանակի: Վախենալ հեղափոխությունից, յերազել ռեֆորմի մասին ու նրվնիյալ այն մասին, թե իրականում ռեֆորմները կիրառվում են ճորտատերերի կողմից ճորտատիրաբար, ստորության ու պակասամտության դադաթնակետն և: Անհամեմատ ավելի իրավացի յե և անհամեմատ ավելի լավ և սովորեցնում ուս ժողովրդին խելք ու բանականութուն Նիկոլայ II-ը, վորն ակնառու կերպով «թողնում և» ընտրություն անել—ճորտատիրական «ռեֆորմներ» կամ ճորտատերերին տապալող ժողովրդական հեղափոխություն:

1861 թվականի փետրվարի 19-ը ճորտատիրական ռեֆորմ եր, վորը մեր լիբերալները կարող են դունադարել ու պատկերել վորպես «խաղաղ» ռեֆորմ միմիայն նրա համար, վոր այն ժամանակ Ռուսաստանում հեղափոխական

շարժումը զոչնչության չափ թույլ եր, իսկ հեղափոխական դասակարգ ճնշված մասսաների մեջ դեռ բոլորովին չկար: 1906 թ. նոյեմբերի 9-ի հրամանը և 1910 թվականի հուլիսի 14-ի սրենքը նույնպիսի բուրժուական բովանդակություններ են, ինչպես և 61 թվականի սեփորմը, բայց լիբերալները չեն կարող այն վերսկսել «խաղաղ» սեփորմ պատկերացնել, չեն կարող այնպես հեշտությամբ սկսել այն գունդարդել (թեպետ նրանք արդեն սկսում էլ են այդ անել, որ, «Русская Мысль»-ում), վերսկսեալ 1861 թվականի միայնակ հեղափոխականներին կարելի չէ մոռանալ, բայց 1905 թվականի հեղափոխությունը չի կարելի մոռանալ: 1905 թվականին Ռուսաստանում ծնվեց հեղափոխական դասակարգը—պրոլետարիատը, վորը կարողացավ հեղափոխական շարժման հանել նաև գյուղացիական մասսային: Իսկ յերբ վորեն յերկրում ծնվել և հեղափոխական դասակարգը, վոր մի հալածանքով նրան չի կարելի ճնշել, նա կարող է կործանվել միայն ամբողջ յերկրի կործանման հետ միասին, նա կարող է միայն հալթելով մեռնել:

Մեկ վերհիշենք 61 թվականի գյուղացիական սեփորմի հիմնական դժբեր: Տիրահույսի «ազատագրումը» գյուղացիների ամենամանխիղճ թալանն էր, մի շարք բռնություններ ու անվերջ անարդանք եր նրանց նկատմամբ: «Ազատագրման» առթիվ սեահողային նահանգներում գյուղացիական հողից կարեցին  $\frac{1}{5}$  մասից ավելի: Միքանի նահանգներում գյուղացիներից կտրեցին, խլեցին գյուղացիական հողի մինչև  $\frac{1}{3}$  և նույնիսկ մինչև  $\frac{2}{5}$ : «Ազատագրման» առթիվ գյուղացիական հողերն այնպես եյին սահմանազծում կալածատիրականներից, վոր գյուղացիները վերաբնակվում եյին «ավազուռի» վրա, իսկ կալածատիրական հողերը սեպի պես խցիվում եյին գյուղացիականների մեջ, վորդետղի ազնւրվագրամ ազնւականների համար ալիլի հեշտ լինեք գյուղացիներին ստրկացնել և հողը նրանց տալ վաշխառուական գներով: «Ազատագրման» առթիվ գյուղացիներին ստրկեցին «փրկազնեք» իրենց սեփական հողերը, ըստվորում հողի իսկահան գնից կրկնակի ու յեռակի ավելի բարձր պրոկե-

ցին: Ահասարակ 60-ական թվականները «սեփորմները» ամբողջ «դարաշրջանը» գյուղացուն թողեց մուրացկան, ծեծկված, խալար, յենթակա կարվածատեր-ճորտատերերին թե՛ դատարանում, թե՛ կառավարչություն մեջ, թե՛ գործուցում և թե՛ գեմատվոյում:

«Մեծ սեփորմը» ճորտատիրական սեփորմ եր և չեր կարող այլ լինել, վորովհետև այն կիրառում եյին ճորտատերերը: Իսկ վոր ուժն եր ստիպում նրանց սեփորմի ձեռնարկել: Ռուսաստանին կապիտալիզմի ուղու վրա ներքաշող անտեսական զարգացման ուժը: Կալվածատեր-ճորտատերերը չեյին կարող արգելել Ռուսաստանի ապրանքափոխանակության աճումը Յեվրոպայի հետ, չեյին կարող անտեսության հին, խորտակված ձևերը սահել: Ղրիմի պատերազմը ցույց տվեց ճորտատիրական Ռուսաստանի փտածությունն ու անդրությունը: Գյուղացիական «խռովությունները», ազատագրումից առաջ յուրաքանչյուր տասնամյակում ավելի ու ավելի աճելով, առաջին կալվածատեր Ալեքսանդր II-ին ստիպեցին ընդունել, թե ավելի լավ է ազատագրել վերևից, քան սպասել, մինչև վոր ստապալեն ներքևից:

«Գյուղացիական սեփորմը» ճորտատերերի կողմից կիրառվող բուրժուական սեփորմ եր: Այս մի քայլ եր Ռուսաստանը բուրժուական միապետություն փոխարկելու ուղիով արված: Գյուղացիական սեփորմի բովանդակությունը բուրժուական եր, և այս բովանդակությունը յերևան եր գալիս այնքան ավելի ուժեղ, վորքան ավելի քիչ եյին կտրվում գյուղացիական հողերը, վորքան ավելի լրիվ եյին բաժանվում նրանք կալվածատիրականներից, վորքան ավելի պակաս եր ճորտատերերին տրվող տուրքի (այսինքն՝ «փրկազնի») չափը, վորքան ճորտատերերի ազդեցությունից ու ճնշումից ավելի ազատ եյին տեղավորվում այս կամ այն վայրի գյուղացիները: Վորքան գյուղացին ճորտատիրոջ իշխանությունից դուրս եր պրծնում, այնքան նա փողի իշխանություն տակ եր մտնում, ապրանքային արտադրության սպառնալիքի մեջ եր ընկնում, ծնվող կապիտալիզմից կալված եր դառնում: Յեվ 61 թվականից հետո Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումն այնպիսի արագությամբ ընթացավ, վոր միքանի տասնամյակներում կատարվեցին փոխա-

կերպումներ, վորոնք Յեվրոպայում միքանի հին յերկրներում ամբողջ դարեր տեսցին:

Ճորտատերերի ու լիբերալների տիրահոջակ պայքարը, վորն այնքան ուսցրել ու պճնադարդել են մեր լիբերալ ու լիբերալ-նարոդնիկական պատմարանները, պայքար եր տիրապետող դասակարգերի ներքում, մեծ մասամբ կալվածատերերի ներքում, պայքար բացառապես գիշումների չափի ու ձևի պատճառով առաջ յեկած: Լիբերալները նույնպես, ինչպես և ճորտատերերը, կանոնաձեռն էին սեփականութունն ու կալվածատերերի իշխանութունը ճանաչելու հողի վրա, զայրույթով դատապարտելով ամեն մի հեղափոխական միտք այս սեփականութունը վոչնչացնելու մասին, այս իշխանութունը լիովին տապալելու մասին:

Այս հեղափոխական մտքերը չէյին կարող չիտորվել ճորտատիրական դյուղացիները դուրսնեղում: Յեվ յեթե ստրկության դարերն այնքան խեղճացրել ու բթացրել էյին դյուղացիական մասսաներին, վոր ուեֆորմի ժամանակ նրանք վոչ մի բանի ընդունակ չէյին, բացի անջատ-անջատ յեղած, յեղակի սարսամբութուններից, ավելի շուտ մինչև անդամ «բունտերից», վորոնք չէյին լուսավորված վոչ մի քաղաքական գիտակցությամբ, — սուր այն ժամանակն էլ արդեն Ռուսաստանում կային հեղափոխականներ, վորոնք կանոնաձեռն էյին դյուղացիության կողմը և ըմբռնում էյին տիրահոջակ «դյուղացիական ուեֆորմի» ամբողջ նեղութունը, ամբողջ խեղճութունը, նրա ամբողջ ճորտատիրական բնույթը: Այս, այն ժամանակ չափազանց սակավաթիվ, հեղափոխականների գլուխ կանոնաձեռն եր Ն. Գ. Չերնիշևիսկին:

1861 թվականի փետրվարի 19-ն արտահայտում և ճորտատիրական դարաշրջանից սաճած նոր, բուրժուական Ռուսաստանի սկզբնավորութունը: 1860-ական թվականների լիբերալներն ու Չերնիշևիսկին ներկայացուցիչներ են յերկու պատմական տենդենցների, յերկու պատմական ուժերի, վորոնք այն որից սկսած և ընդհուպ մինչև մեր ժամանակները վորոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի յեղքը: Ահա թե ինչու փետրվարի 19-ի հիսնամյակի որը գիտակից պրոլետարիատը կարելին չափ իրեն ավելի

պարզ հաշիվ պիտի տա այն մասին, թե վո'րն եր յերկու տենդենցների եյությունը և վո'րն և նրանց փոխհարաբերությունը:

Լիբերալները կամենում էյին Ռուսաստանն «աղաթագրել» «վերելից», չխորտակելով վո'չ ցարի միապետությունը, վո'չ և կալվածատերերի հողատիրությունն ու իշխանությունը, դրդելով նրանց միայն «ղիջումներ անել» ժամանակի վողուն: Լիբերալներ էյին և մնում են բուրժուազիայի իղեղողները, վորը չի կարող հաշտվել ճորտատիրության հետ, բայց վորը վախենում և հեղափոխությունից, վախենում և մասսաների այն շարժումից, վորն ընդունակ և միապետությունը տապալել ու կալվածատերերի իշխանությունը վոչնչացնել: Ուստի և լիբերալները սահմանափակվում են «ուեֆորմների համար մղվող պայքարով», «իրավունքների համար մղվող պայքարով», այսինքն՝ իշխանության բաժանքով ճորտատերերի ու բուրժուազիայի միջև: Վոչ մի այլ «ուեֆորմ», բացի ճորտատերերի կիրառածից, վոչ մի այլ «իրավունք», բացի ճորտատերերի կամայականության կողմից սահմանափակվածից, չի կարող ստացվել ուժերի այսպիսի փոխհարաբերությունների ժամանակ:

Չերնիշևիսկին սոցիալիստ-ուստպիստ եր, վորը սոցիալիզմին անցնելու մասին յերազում եր հին, կիսաֆեոդալական, դյուղացիական համայնքի միջոցով, վորը չերտեսնում և անցյալ դարի 60-ական թվականներին չեր կարող տեսնել, վոր կապիտալիզմի ու պրոլետարիատի դարգացումը միայն ընդունակ և նյութական պայմաններ ու հասարակական ուժ տեղծել սոցիալիզմի իրականացման համար: Բայց Չերնիշևիսկին միայն սոցիալիստ-ուստպիստ չեր: Նա նաև հեղափոխական դեմոկրատ եր, նա կարողանում եր հեղափոխական վողով քողել իր դարաշրջանի բոլոր քաղաքական դեպքերի վրա, անցկացնելով — դրաճնության խոչընդոտների ու արդելքների միջով — դյուղացիական հեղափոխության գաղափարը, բոլոր հին իշխանությունները տապալելու համար մասսաների մղած պայքարի դադափարը: 61 թվականի «դյուղացիական ուեֆորմը», վորը լիբերալները

սկզբում դուռնագարդում էյին, իսկ հետո մինչև անդամ դռնաբանում, նա գարշելիուքյուն անվանեց, վորովհետև նա պարզ տեսնում էր նրա ճորտատիրական բնույթը, պարզ տեսնում էր, վոր ս. ս. լիբերալ աղատարարները դյուզացիներին մաքուր պլոկում են: 60-ական թվականների լիբերալներին Չերնիչեվսկին «շաղակրատներ, ինֆուպարծներ ու տխմարներ» անվանեց, վորովհետև նա պարզ տեսնում էր նրանց յերկյուղը հեղափոխության առաջ, նրանց անհաստատահամությունն ու ծառայամտությունն իշխանություն ունեցողների առաջ:

Այս յերկու պատմական տենդենցները զարդանում էյին փետրվարի 19-ից հետո անցած կես դարի ընթացքում, և տարամիտում էյին ավելի ու ավելի պարզ, վորոչ ու վրձնական կերպով: Աճում էյին լիբերալ-միապետական բուրժուազիայի ուժերը, վորը քարոզում էր «կուլտուրական» աշխատանքով բավարարվել և խույս եր տալիս հեղափոխական ընդհատակից: Աճում էյին դեմոկրատիայի ու սոցիալիզմի ուժերը—վորոնք սկզբում միախառն էյին նարոդովոլոցեների և հեղափոխական նարոդնիկների ուսուպիական իդեոլոգիայի մեջ ու ինտելիգենտական պայքարում, իսկ անցյալ դարի 90-ական թվականներից սկսել էյին տարամիտել տեղափոխների ու միայնակ պրոպագանդիստների հեղափոխական պայքարից բղն հեղափոխական դասակարգերի պայքարին անցնելու չափով:

Հեղափոխությունից առաջ յեղած տասնամյակը, 1895-ից մինչև 1904 թվականը, արդեն մեզ ցույց է տալիս պրոլետարական մասսայի բացահայտ յերույթներն ու անչեղ աճումը, գործադուլային պայքարի աճումը, սոցիալ-դեմոկրատական բանվորական աղիտացիայի, կազմակերպության, կուսակցության աճումը: Պրոլետարիատի սոցիալիստական ավանդարդի հետևից սկսում էր մասսայական պայքարի յեյնել, մանավանդ 1902 թվականից, նաև հեղափոխական-դեմոկրատական դյուզացիությունը:

Այն յերկու տենդենցները, վորոնք 61 թվականին միտայն նշվեցին կյանքում, գրականության մեջ նոր-նոր ուրվագծվեցին, 1905 թվականի հեղափոխության մեջ զարգա-

ցան, աճեցին, իրենց արտահայտությունը գտան մասսաների շարժման մեջ, կուսակցությունների պայքարի մեջ ամենատարբեր ասպարեղներում, մամուլում, միտինգներում, միություններում, գործադուլներում, սպասամբության մեջ, Պետական Դումաներում:

Լիբերալ-միապետական բուրժուազիան ստեղծեց կազեաների ու հոկտեմբերյանների կուսակցությունները<sup>20</sup>, վորոնք սկզբում համերաշխում էյին մեկ գեմակի-լիբերալ շարժման մեջ (մինչև 1905 թվականի ամառը), հետո վորոչում վորպես առանձին կուսակցություններ, վորոնք սաստիկ մրցում էյին (և մրցում են) իրար հետ, առաջ մղելով մեկն առավելապես իր լիբերալ, մյուսն առավելապես իր միապետական «դեմքը», բայց վորքան ամենաեյականում միշտ համամիտում էյին՝ հեղափոխականներին պարտավելու մեջ, դեկտեմբերյան սպասամբությունը ծաղրի առարկա դարձնելու մեջ, արտուլտիզմի «սահմանադրական» թղենու տերևի առաջ՝ վորպես դրոշի առաջ՝ ծուկ չոքելու մեջ: Յերկու կուսակցություններն ևլ կանդնած էյին և կանդնած են «խիստ-սահմանադրական» հողի վրա, այսինքն՝ սահմանափակվում են գործունեյության այն շրջանակներով, վորոնք կարող էր ստեղծել ցարի ու ճորտատերերի սև հարյուրյակը, Հհանձնելով իր իշխանությունը, ձեռքից բաց չթողնելով իր ինքնակայությունը, կուպեկ անդամ չդհարերելով «զարերով սրբադործված» իր ստրկատիրական յեկամուտներից, ամենաչնչին արտոնությունն անդամ՝ իր «բարենվաճված» իրավունքներից:

Դեմոկրատական ու սոցիալիստական տենդենցները լիբերալ տենդենցից բաժանվեցին ու իրարից սահմանադժվեցին: Պրոլետարիատը կազմակերպվում ու հանդես եր գալիս դյուզացիությունից անջատ, համախմբվելով իր բանվորական ս. դ. կուսակցության շուրջը: Գյուզացիությունը հեղափոխության մեջ անհամեմատ ավելի թույլ էր կազմակերպված, նրա յերույթները շատ ու շատ անդամ ավելի բաժան-բաժան, ավելի թույլ էյին, նրա գիտակցականությունն անհամեմատ ավելի ցածր աստիճանի վրա յեր կանդնած, և միապետական (նույնպես և նրանց հետ անխզելիորեն

կատրիսի օսհմանադրական) պատրանքները հաճախ ջլատում էին նրա յեռանդը, նրան կախվածության մեջ էին դնում լիբերալներին, իսկ յերբեմն էլ՝ սևհարյուրյակայիններին, դատարկ յերազկոտություն էին ծնեցնում «աստվածային հողի» մասին, փոխանակ ազնվական-հողատերերի դեմ ուղղված գրոհի՝ այս դասակարգը լիովին վոչնչացնելու նպատակով: Բայց այնուամենայնիվ, ընդհանրապես ու ամբողջութեամբ վերցրած, գյուղացիությունը, վորպես մասսա, պայքարում էր հատկապես կալվածատերերի դեմ, հանդես էր գալիս հեղափոխականորեն, և բոլոր Դոմաններում՝ մինչև անդամ յերրորդում, իր հողուտ ճորտատերերի ալլանդակած ներկայացուցչութեամբ—նա ստեղծեց ալլախտավորական խմբեր, վորոնք, չնայած իրենց հաճախակի տատանումներին, ներկայացնում էին իսկական դեմոկրատիա: 1905—1907 թվականների կադետներն ու տրուդոլիկները մասսայական շարժման մեջ արտահայտեցին ու քաղաքականորեն ձևակերպեցին բուրժուազիայի դիրքն ու տենդենցները, մի կողմից՝ լիբերալ-միապետական բուրժուազիայի, իսկ մյուս կողմից՝ հեղափոխական-դեմոկրատական բուրժուազիայի:

1861 թվականը ծնեց 1905-ը: Առաջին «մեծ» բուրժուական ռեֆորմի ճորտատիրական բնույթը դժվարացրեց զարգացումը, գյուղացիներին հազարավոր ամենալատթար ու դատնադոյն տանջանքների մտանց, բայց զարգացման ուղղությունը չփոխեց, 1905 թվականի բուրժուական հեղափոխությունը չկանխեց: 61 թվականի ռեֆորմը հանդուցալուծումը հետաձգեց, բանալով վորոշ կախարիչ, տարով կապիտալիզմին վորոշ աճ, բայց նա չվերացրեց անխուսափելի հանգուցալուծումը, վորը 1905 թվականի մոտերքը տեղի ունեցավ անհամեմատ ավելի լայն ստարեկուտ, ցարի ու ճորտատեր-կալվածատերերի դեմ ուղղված՝ մասսաների գրոհում: Այն ռեֆորմը, վորն անց էր կացվել ճորտատերերի կողմից ճնշված մասսաների կատարյալ անդարգացածության դարաշրջանում, հեղափոխություն ծնեց այն ժամանակի մոտերքը, յերբ այս մասսաներում հասունացան հեղափոխական տարրերը:

Յերրորդ Դոմանն ու ստոլիպինյան ազրարային քաղաքականությունը յերկրորդ բուրժուական ռեֆորմն է, վոր անց են կացնում ճորտատերերը: Յեթե 61 թվականի փեարրվարի 19-ն առաջին քայլն էր զուտ ճորտատիրական ինքնակալությունը բուրժուական միապետության փոխարկելու ուղիով, ապա 1908—10 թվականների շրջանը մեղցույց է տալիս յերկրորդ ու ավելի լուրջ քայլը նույն ուղիով: Համարյա 4½ տարի յե անցել 1906 թվականի նոյեմբերի 9-ի ուկալի հրատարակման ժամանակից, ավելի քան 3½ տարի յե-անցել 1907 թվականի հունիսի 3-ից<sup>21</sup>, և արդեն այժմ վո'չ միայն կադետական, այլ զգալի չափով նաև հոկտեմբերական բուրժուազիան համոզվում են հունիսի 3-ի «սահմանադրության» ու հունիսի 3-ի ազրարային քաղաքականության «ձախողման» մեջ: «Կադետներից ամենաաջադույնը»—ինչպես նորբա իրավամբ կոչվեց կիսահոկտեմբերական պ. Մակլակովը—կատարյալ իրավունք ունեւր փետրվարի 25-ին կադետների ու հոկտեմբերականների անուկից Պետական Դոմայում ասելու, թե «ներկայումս դժգոհ են յերկրի այն կենտրոնական տարրերը, վորոնք ամենից ավելի յեն հաստատուն խաղաղություն կամենում, վորոնք վախենում են հեղափոխական պատերազմի նոր բռնկումից»: Ընդհանուր լողունդը մեկ է. «ամենքն ասում են,—չարունակում էր պ. Մակլակովը,—վոր յեթե մենք ավելի հեռու գնանք այն ուղիով, վորով մեզ տանում են, ապա մեզ կհասցնեն յերկրորդ հեղափոխության»:

Կադետական-հոկտեմբերական բուրժուազիայի ընդհանուր լողունդը 1911 թվականի դարնանը հաստատում է իրերի գրության այն զնահատականի ճշտությունը, վորը տվել է մեր կուսակցությունը 1908 թվականի դեկտեմբերյան կոնֆերենցիայի բանաձևում: «Տնտեսական ու քաղաքական կյանքի հիմնական գործոնները,—ասում է այդ բանաձևը—վորոնք առաջացրին 1905 թվականի հեղափոխությունը, շարունակում են գործել, և այդպիսի անտեսական ու քաղաքական գրության պարագայում նոր հեղափոխական ճգնաժամը հասունանում է անխուսափելիորեն»:

Նորբա սևհարյուրյակային ցարական կառավարության

վարձկան գրչակ Մենչիկովը «Новое Время»-յում հայտարարեց, թե փետրվարի 19-ի ռեֆորմը «վոդորմելիորեն տապալել է», վորովհետև «61 թվականը չկարողացավ կանխել իննհարյուրհինգը»: Այժմ լիբերալ բուրժուազիայի վարձկան փաստարաններն ու պառլամենտական անձերը հայտարարում են 1906 թ. XI. 9-ի ու 1907 թ. VI. 3-ի «ռեֆորմները» դեպի յերկրորդ հեղափոխութունն եմ տանում:

Յերկու հայտարարութուններն էլ, ինչպես և 1861—1905 թվականների լիբերալ ու հեղափոխական շարժման ամբողջ պատմութունը, տալիս են ամենահետաքրքրական նյութ՝ պարզելու համար հեղափոխության հանդեպ ռեֆորմի ունեցած վերաբերմունքի կարևորագույն հարցը, ռեֆորմիստների ու հեղափոխականների դերը հասարակական պայքարում:

Հեղափոխության հակառակորդները, վո՛րն ատելությամբ ու ատամների կրճատցով, վո՛րը դատնությամբ ու վհատությամբ, 1861 ու 1907—1910 թվականների «ռեֆորմները» համարում են անհաջող, վորովհետև նրանք չեն կանխում հեղափոխութունը: Սոցիալ-դեմոկրատիան, մեր որերի միակ մինչև վերջը հեղափոխական դասակարգի ներկայացուցիչը, այս խոստովանությանը պատասխանում և հեղափոխականները հասարակական պայքարում ու բոլոր սոցիալական ճղնաժամերում մեծագույն պատմական դեր են խաղացել մինչև անգամ այն ժամանակ, յերբ այս ճղնաժամերն անմիջականորեն դեպի միայն կիսատ-պոստ ռեֆորմներն էլին տանում: Հեղափոխականներն այն հասարակական ուժերի առաջնորդներն են, վորոնք ստեղծագործում են բոլոր բարեփոխութունները. ռեֆորմները հեղափոխական պայքարի կողմնակի արդյունքն են:

1861 թվականի հեղափոխականները մնացին միայնակ և, ըստ յերևութին, կատարյալ պարտութուն կրեցին: Իրականում հենց նրանք էլին այն դարաշրջանի մեծ դործիչները, և վորքան մենք ավելի յենք հեռանում նրանից, այնքան մեզ համար ավելի պարզ է նրանց մեծութունը, այնքան ավելի ակներև է այն ժամանակվա լիբերալ ռեֆորմիստների չնչինութունը, խեղճութունը:

1905—1907 թվականների հեղափոխական դասակարգը, սոցիալիստական պրոլետարիատն, ըստ յերևութին, կատարյալ պարտութուն կրեց: Թե՛ լիբերալ միապետականները, թե՛ լիկվիդատորները նույնպես-մարքսիստները թվեց ականջները խլացնելու չափ ազդակում էլին այն մասին, թե ինչպես նա իբր թե «չափացանց հեռու» յե գնացել, մինչև «եքսցեսսները» յե հասել, թե ինչպես նա անձնատուր է յեղել «տարերային դասակարգային պայքարը» հրապուրանքին, թե ինչպես նա «պրոլետարիատի հեգեմոնիայի» կործանարար գաղափարին թույլ է տվել գայթակղեցնելու իրեն և այլն և այլն: Իրականում պրոլետարիատի «մեղքը» միայն այն էր, վոր նա բավականաչափ հեռու չգնաց, բայց այս «մեղքն» արդարացվում է նրա ուժերի այն ժամանակվա դրությամբ ու քափվում ամենավատթար ռեակցիայի ժամանակն էլ կատարվող անդուլ հեղափոխական սոցիալ-դեմոկրատական աշխատանքով, ռեֆորմիզմի ու ոպորտունիզմի բոլոր արտահայտումների դեմ մղվող աննկուն պայքարով: Իրականում այն ամենը, ինչ նվաճված է թչնամիներից, այն ամենը, ինչ նվաճումների մեջ հաստատուն է, նվաճված է ու պահվում է այն չափով, ինչ չափով հեղափոխական պայքարն ուժեղ ու կենդանի յե պրոլետարական աշխատանքի բոլոր ասպարեզներում: Իրականում միայն պրոլետարիատն էր հետևողական դեմոկրատիզմը մինչև վերջը պաշտպանում, մերկացնելով լիբերալիզմի ամբողջ խախուտութունը, նրա ազդեցության տակից դուրս կորզելով դյուղացիությանը, հերոսական խիզախությամբ գինված ապստամբության յեղևելով:

Վոչ վոք է վիճակի չե նախագուշակելու, թե վորչափով կլերականանան Ռուսաստանի իսկապես դեմոկրատական փոխակերպութունները նրա բուրժուական հեղափոխութունների դարաշրջանում, բայց կասկածի նշույլ անգամ չկա, վոր պրոլետարիատի հեղափոխական պայքարը միայն կվորոշի փոխակերպութունների աստիճանն ու հաջողությունը: Բուրժուական վոդով ճորտատիրական «ռեֆորմները» ու պրոլետարիատի ղեկավարած դեմոկրատական հեղափոխության միջև կարող են լինել լիբերալիզմի ու ոպոր-

տունը հասական ակֆորմիզմի անդոր, փոփոխամիտ, գաղափարապետիկ տատանումները միայն:


Ընդհանուր հայացք դրելով Ռուսաստանի վերջին կես դարի պատմության վրա, 1861 ու 1905 թվականների վրա, մենք միայն կարող ենք ե՛լ ավելի մեծ համոզմունքով կրկնել մեր կուսակցական բանաձևի խոսքերը. «մեր պայքարի նպատակն է առաջվա պես ցարիզմի տապալումը, քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից, վերը հենվում է դյուրացիության հեղափոխական խավերի վրա և բուրժուական-դեմոկրատական հեղաշրջում է կատարում Համաժողովրդական Սահմանադիր ժողով դումայի և դեմոկրատական հանրապետություն ստեղծելու ուղիով»:

«Социал-демократ» № 21—22,  
1911 թ. ապրիլի 1 (մարտի 19):

## ՍՈՇՈՐ ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

1861 թ. փետրվարի 19-ի հենց նոր անցած տարեդարձի առթիվ ավելորդ էի լինի հիշեցնել հողի արդի բաշխումը Յեվրոպական Ռուսաստանում:

Յեվրոպական Ռուսաստանում հողի բաշխման վերջին պաշտոնական վիճակագրությունը հրատարակված է ներքին գործերի մինիստրության կողմից ու վերաբերում է 1905 թվականին:



Այս վիճակագրության տվյալներով 500 դեկյատինից ավելի հող ունեցող խոշորագույն կալվածատերերը (կլոր թվով) մոտ 30·000 էին, նրանց հողը—մոտ 70·000·000 դեկյատին:

Մոտ 10·000·000 չքավորագույն դյուրացիական տնտեսություններ ունեն նույնքան հող:

Միջին թվով, կնչանակի, ամեն մի խոշորագույն կալվածատիրոջ ընկնում է մոտ 330 չքավորագույն դյուրացիական ընտանիք, ըստվորում յուրաքանչյուր դյուրացիական



ընտանիք ունի մոտ 7 (յոթ) զեայատին հող, իսկ յուրաքանչյուր խոշորագույն կալվածատեր—մոտ 2-300 (յերկու հազար յերեք հարյուր) զեայատին:

Վարպետի ավելի ակնառու կերպով պարզաբանենք այս, կազմված է վերը սպառնալից դժվածքը:

Մեջտեղի մեծ սպիտակ քառանկյունին—դա խոշոր կալվածատիրոջ կալվածքն է: Շուրջը գտնվող փոքրիկ քառակուսիկները,—դրանք մանր գյուղացիական հողամասերն են:

Ընդամենը քառակուսիկները—324 են, իսկ սպիտակ քառանկյունու մակարդակը հավասար է 320 քառակուսիկներին:

«Правда» № 51 (255),  
1913 թ. մարտի 15 (2):

1861 թ. փետրվարի 19-ին հրատարակվեց ցար Ալեքսանդր II-ի մանիֆեստը՝ գյուղացիներին ճորտական կախումից «ազատագրելու» մասին: Գյուղացիները դադարեցին կալվածատերերի սեփականությունը լինել, նրանց այլևս չէր կարելի վաճառել և գնել: Բայց «ազատագրման» ժամանակ գյուղացիներից կտրեցին նրանց հողերի  $\frac{1}{5}$ -ից ավելին, իրեցին նրանց անատները, արտավայրերը, մարդագետնները, ստիպեցին գյուղացիներին կալվածատերերին վճարել մոտ յերկու միլիարդ սուբսիդիներին: 1861 թ. օկտոբրով «գյուղացիությունն այնպիսի վիճակի հասցվեց, զորի ժամանակ հնարավոր չէր վճել սպիտակ, վճել էլ մեռնելը»—գրում էր Ենգելսը 1878 թ.:—5:

<sup>2</sup> Հաշտարար միջնորդներ — այն չինովնիկներն էլին, վոյսեք նշանակվում էլին նահանգապետերի կողմից 1861 թ. օկտոբրի հետ կապված միջոցառումները կիրառելու համար. կալվածատերերի՝ գյուղացիներին հետ «համաձայնություն» մշակելը, կանոնադրեր կազմելը և այլն: Հաշտարար միջնորդները միշտ նշանակվում էլին տեղական ազնվականներից՝ կալվածատերերից:—6:

<sup>3</sup> Կանոնագրեր — այն փաստաթղթերն էլին, վորոնք սահմանում էլին գյուղացիական հողաբաժնի չափերն ու սահմանները և գյուղացիական պարհակը:—6:

<sup>4</sup> Այն ժամանակի լավագույն մարդիկ — դրանք Ն. Գ. Չերնիշևսկին և 60-ական թվականների մյուս հեղափոխականներն էլին: Չերնիշևսկին պարզորոշ տեսնում էր 1861 թ. օկտոբրի ճորտատիրական բնույթը, տեսնում էր, վոր ցարական կառավարությունը, «ազատագրելով» գյուղացիներին, ամենից շատ հոգ էր տանում այն մասին, վորպեսզի գյուղացիներից սովելի շատ սլոտիլի հոգուտ կալվածատերերի, տեսնում էր, վոր կալվածատերերը առաջիկա նման «անլիաս և անպատիժ կման, անլիաս կման ժողովրդի յեկամուտները կողոպտելու մեջ, անպատիժ կման բոլոր ճնշումների և հանցադրությունների համար»: (Չերնիշևսկի, «Пролог»): 1861 թ. օկտոբրը Չերնիշևսկին անվանում էր «գարշելություն», և յերր օկտոբրը հրատարակվեց, ներկայացվեց, Չերնիշևսկու և Դորբոլյուբովի «Современник» հանդեսը օկտոբրի մասին վոչ մի հոգված չտպեց, այն դիմավորեց լիակատար լուսթյամբ, «լուսթյան անեծքով», ինչպես գրում է Լենինը:—7:

5 Նաբոգոնիզմի մարտիստների հետ ունեցած վեճերում, վրոննց մասին դրում է Լենինը, մարքսիստները հաղթանակ տարան և իրենց Զարևակողներին նարոգոնիզմին: Նարոգոնիզմը Վ. Վ. Միխայլովիչին, Նիկոլայ — ունը և ուրիշները պնդում էին, թե կապիտալիզմը Ռուսաստանում չի զարգանա, թե առաջավոր դասակարգը վոչ թե պրոլետարիատն է, այլ դուրգացիոնիստները, թե անցումը դեպի սոցիալիզմ Ռուսաստանում կհասարվի, իբր թե, դուրգացիական համայնքի միջոցով: Նարոգոնիզմի դործնական առաջարկությունները հանդուս էին այն բանին, վրոննցի դուրգում մի շարք միջոցառումներ անցկացվեին, վրոննց ողտավետ լինելին կուլակային անտեսություններին: Լենինը իր «Վոչ և ն ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատներին դեմ» (1894 թ.), «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» (1899 թ.) և ուր. աշխատություններում վերջնականորեն ջախջախեց նարոգոնիզմին, մերկացրեց նրանց, վրոննց «ժողովրդի» կեղծ «բարեկամներին», վրոննց իրականում դնում են ժողովրդի դեմ, ցույց տվեց, վոր նրանք ցարիզմի դեմ հեղափոխական պայքարի փոխարեն, ցարիզմի հետ հաշտություն են քարոզում, վոր նրանք բուրժուազիստներն են, թեև իրենց սոցիալիստներ են անվանում, վոր նրանք կուլակիոնիստ շահերի արտահայտիչներն են:—16:

• 1861 թ. փետրվարի 19-ի կանոնադրության մեջ շարադրված էին դուրգացիներին և որտեղից կախումից «ազատագրելու» պայմաններն ու կարգը:—16:

7 Լենինը նկատի ունի «Եղալ մարքսիզմը», վորի ներկայացուցիչներն էին Ստրուվեն, Տադան-Բարանովսկին և ուր: «Եղալ մարքսիստները»—դրանք բուրժուական ինտելիգենտներ են, վորոնք անցյալ դարի 90-ական թվականներին դուրվել էին մարքսիստական հաղուստով: Մարքսի ուսմունքից նրանք դուրս էին նետում ամենից գլխավորը՝ պրոլետարիական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի ուսմունքը: Իրենց մարքսիստներ անվանելով և հանդես գալով նարոգոնիզմի դեմ, «Եղալ մարքսիստները» դավերդում էին կապիտալիստական կարգը և փորձում էին բանվորական շարժումը հարմարեցնել բուրժուազիայի շահերին:—18:

8 Լիկվիդատորայալ — մենչևիկները՝ պրոլետարիատի հեղափոխական անկողնի կուսակցությունը լիկվիդացիայի յենթարկելու և այն լիզալ, այսինքն՝ ցարական կառավարության կողմից թույլատրված, ցարական ուժերի «հարմարված», սպորտալիստական միավորմամբ փոխարինելու փորձերն էին: Լիկվիդատորները, վրոննց ամբողջովին պաշտպանում էր Տրոցկին, մերկացվեցին և ջախջախվեցին բուլգարիկներին կողմից:—18:

9 Ուսուցիչական սոցիալիզմը «քննադատում էր կապիտալիստական հասարակությանը, գատապարտում, նպոլում էր նրան, յերազում էր նրա վոչնչացման մասին, յերեակայում էր լավագույն կարգի մասին, համոզում էր հարուստներին շահագործման անբարոյական լինելու մեջ:

Բայց ուսուցիչական սոցիալիզմը չէր կարող մասնանշել իրական յեղբը: Նա չէր կարող վոչ բացատրել կապիտալիզմի որով վարձուստրկուլթյան էյոնիլունը, վոչ բացահայտել նրա դարդարացման սրենքները, վոչ էլ գտնել հասարակական այն ուժը, վորն ընդունակ էին զատնոր հասարակության ստեղծողը» (Լենին) —21:

10 «... Գլուխակցիական և Բեֆորմից 44 տարի հետո», այսինքն 1905 թ. հեղափոխության ժամանակ:—22:

11 Կաղեխներ — սահմանադրական-դեմոկրատական կուսակցություն, լիբերալ-միապետական բուրժուազիայի գլխավոր կուսակցությունը, վորը կազմավորվել է 1905 թ.: «Լիբերալ բուրժուաները տատանվում են ժողովրդի և Զարգարանների կառավարության միջև: Խոսքով նրանք կառավարության դեմ են, իրականում նրանք ամենից շատ վախենում են ժողովրդի պայքարից, իրականում նրանք միապետության, այսինքն՝ Զարգարանների հետ ընդդեմ ժողովրդի դրածարք են ուղղում» (Լենին): 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո կաղեխները խորհրդային իշխանության վրեժերից թշնամիներն են, Խորհրդաների դեմ գինված պայքարի կազմակերպիչներ:

Տրուդոլիկներ, աշխատանքային խումբ՝ դուրգացիոնիստ ներկայացուցիչները Պետական Դումայում: Տրուդոլիկները արտահայտում էին դուրգացիական մասսաների տրամադրությունը, վորոնք պահանջում էին դուրգացիներին հանձնել կալվածատիրական հողերը: Բայց արուղովիչներին քաղաքականությունը անվճարական էր, աստպնվողական, նրանք «... տատանվում էին կաղեխների և բանվորական դեմոկրատիայի (բուլգարիկներին) միջև... Տրուդոլիկներին տատանումները՝ կաղեխներին և բանվորական դեմոկրատիայի միջև՝ անխուսափելիորեն բլխում էին մանր անտեսությունների դասակարգային դրուժխանից» (Համկ(ր) պատմաբյալ, համառու պարբերակ):—23:

12 Հեգելմոն — գեկավար:—26:

13 «Ազգային ակումբ» — միապետական կազմակերպություն, բաղկացած խոչորագույն և ամենահարուստ կալվածատերերից:—27:

14 Սև հարյուրյակներ ժողովուրդն անվանեց միապետական Զարգար բանդաներին («Ռուս ժողովրդի միությունը», «Միջայել հրեշտակապահի միությունը»), վրոննց բողկացած էին ճորտատեր-կալվածատերերից, քահանաներից, խանութպաններից, ալյուրալիստներից, դոզերից, բանդաներից և այլն: Սև հարյուրյակները, վրոննցիստության աշակցություններ, սպանում էին հեղափոխականներին, հրկիղում էին այն շենքերը, վրոննց տեղի էին ունենում ժողովներ, դնդակահարում էին բանվորական ցույցերը, ուրբում էին հրեական Զարգար: Սև հարյուրյակները գլուխ էին կանգնած ցարական չինովնիկները, կալվածատերերը, յեպիսկոպոսները:—27:

15 Կալվածատիրական, ազգայական Դումա Պետական III Դուման էր, վորը բացվեց 1907 թ. նոյեմբերին: Պետական III Դումայի դեպուտատների հակայական մեծամասնությունը կազմում էին կալվածատերերը և կապիտալիստները: Դումայի կուսակցական կազմը այսպիսին

ևր. 442) զեզրուատաներից սեհարյուրյակայիններ էյին 171, ոհայար-  
բեռններ և նրան ազդակից խմբերի անդամներ՝ 113, կաղեաներ և  
նրանց մտտիկ խմբերի անդամներ՝ 101, տրուդովիկներ՝ 13, սոցիալ-  
դեմոկրատներ 18:—28:

16 Ղրիմի պատերազմը ցարական Ռուսաստանը մղում էր 1853—1856  
թվերին Քրուրքիայի, Ճրանտիայի և Անդլիայի դեմ: 11 ամիս Փրանսա-  
ցիներն ու անգլիացիները պաշարեցին Սևվաստպոլը: Ռուս զինվորները  
հերոսաբար պաշտպանվեցին, բայց նրանց մոտ լավ սպտադինում չկար,  
բանակի մատակարարումը դանդաղում էր կաշտակներին և դանձադողերի  
ձեռքին, բանակը ղեկավարում էյին այնպիսի ղեներալներ, վորոնք  
նույնիսկ չունեին Ղրիմի լավ զարտեղը, և ցարական Ռուսաստանը  
պարտութուն կրեց: Պատերազմը վերջանալուն պես ամբողջ յերկրում  
դյուզացիների ապստամբութուններ սկսվեցին, վորոնք պահանջում էյին  
ադատադրվել ճորտատիրական կախումից:—28:

17 Հողային այն քաղաքականութունը, վոր վարում էր ցարական  
մինիստր Ստոլիպինը, հեշտացնում էր հարուստ դյուզացիներին՝ կու-  
լակներին տեղափոխվել խուտորներ և ողնում էր նրանց դրոշի արժե-  
քով հողեր գնել չքավորներին: 1906 թ. նոյեմբերի 9-ին որենք հրա-  
տարակվեց դյուզացիներին՝ համայնքից դուրս գալու մասին և խուտոր-  
ներ տեղափոխվելու մասին:

«Այդ որենքը հրատարակվելուց հետո մի քանի տարվա ընթացքում  
մեկ միլիոնից ավելի սակավազոր դյուզացիներ բուրժուական զրկվեցին հո-  
ղից և քայքայվեցին...»

Յեթե դյուզացիներին «ադատազրման» ժամանակ կալվածատերերը կո-  
դոստում էյին դյուզացիական հողը, սույա այժմ կուլակներն սկսեցին  
կողոպտել համայնական հողը, ստանալով լավագույն հողամասեր, չքա-  
վորութունից ետան ղներով իրենց ձեռքը հավաքելով նրանց հողաբա-  
ժինները:

Ցարական կառավարութունը կուլակներին զգալի վարկեր էր տա-  
լիս՝ հող գնելու և խուտորներ շինելու համար: Ստոլիպինն ուզում էր  
կուլակներին դարձնել փոքրիկ կալվածատերեր՝ ցարական ինքնակալու-  
թյան հավատարիմ պաշտպաններ» (Համկ(բ)Կ պատմության համառոտ  
դաքնութիւն):—32:

18 Ռեսկրիպա Ստոլիպինին—ցարի գրովոր ցիմումն էր Ստոլի-  
պինին:—32:

19 Միացյալ ազնվականության խորհուրդ — կաղմակերպվեց 1906 թ.  
մայիսին և բաղկացած էր բարձր ազնվականության ներկայացուցիչ  
ճորտատեր-սեհարյուրյակայիններից: Կարևորագույն որենքները ցարա-  
կան կառավարութունը նախորդ գնում էր նրա քննությանը:—33:

20 Ոկոյարբիտներ կամ «Հոկտեմբերի 17-ի Միութուն» — խոչոր  
կապիտալիստների և իրենց տնտեսութունը կապիտալիստներն վարող  
կալվածատերերի կուսակցութունն էր: Ոկոյարբիտները լիովին պաշա-  
պանում էյին ցարական կառավարության քաղաքականութունը և սե-  
հարյուրյակայիններից տարբերվում էյին միայն նրանով, վոր խոսքով

1905 թվի հոկտեմբերի 17-ի մանիֆեստի կողմնակիցներ էյին: (Այդ մա-  
նիֆեստը, վորը հրատարակվեց հեղափոխութունից մահու շափ սարսա-  
ված ցարը, ժողովրդին խոստանում էր խոսքի, մամուլի, ժողովների և  
այլնի ազատութուն. մանիֆեստի խոստումներից վոչ մեկը չկատար-  
վեց): Լեհներն ոկոյարբիտներին տվեց այսպիսի բնութագրեր. «Տիպիկ  
ոկոյարբիտսը վոչ թե բուրժուական ինտելիգենտն է, այլ խոչոր բուր-  
ժուան է... Ամենաուղղակի կերպով շահագրգռված լինելով կապիտա-  
լիստական շահագործման մեջ, նա արհամարհում է ամեն մի թեոքիս,  
թքում է ինտելիգենցիայի վրա, դեն և շարտում կաղեաններին հատուկ՝  
«դեմոկրատիզմի» ամեն տեսակ պրետենզիաները: Այդ բուրժուա-գործա-  
բարն է»:—39:

21 1906 թ. նոյեմբերի 9-ի հրամանագիրը — համայնքներից դյուզա-  
ցիները դուրս գալու և խուտոր տեղափոխվելու մասին որենքը:

1907 թ. հունիսի 3-ին ցարական կառավարութունը ցրեց Պետական  
II Դուման և արքոր ու տաժանախալը ուղարկեց սոցիալ-դեմոկրատ դե-  
պուտատներին: Ընտրական նոր որենք հրատարակվեց, ըստ վորի բան-  
վորներ և դյուզացիներին ներկայացուցիչ ղեպուտատներին թիվը Պետա-  
կան Դումայում խիտ նվազեց, իսկ կալվածատեր և կապիտալիստ դե-  
պուտատների թիվը նշանակելիորեն ավելացավ: Այդ որենքով ընտրական  
իրավունքներից լիովին զրկվեցին Սերբերի և Միջին Ասիայի բոլոր ժողո-  
վուրդները և կրճատվեցին Կովկասի և Լեհաստանի ժողովուրդներին  
իրավունքները: 1907 թ. հունիսի 3-ը սովորաբար անվանում են հունիս-  
յերեքյան պետական հեղաշրջման օր:—41:

Ալեքսանդր II — ռուսական ցար 1855-ից մինչև 1881 թ.։ Նրա թագավորության ժամանակ անցկացվեց 1861 թ. օկտոբրի 19-ը, վերջին օրը Ռուսաստանում վերացրեց ճորտատիրական իրավունքը։—35:

Կավելիե — զորոֆեսոր, անցյալ դարի 50—60-ական թվականներին լիբերալներին պիտակող դործիչներից մեկն է։ Կավելիեի և այլ լիբերալները 1861 թ. օկտոբրին անցկացնելու ժամանակ կանգնած էին միապետության և կայսրապետության հողատիրության պահպանման կողմը, բայց ցարական կառավարությանը խնդրում էին դուրսացնել իրենց փոխանի անդամ գեներալներ անել։—21:

Մակլախով — կադետ, Պետական II, III և IV Դումաների անդամ։—41:

Մեջլիկով — ծախված սևաբուրձապանի ժողովուրդ, «Новое Время» միապետական թերթի աշխատակից։—23, 31, 42:

Նիկոլայ II — Նիկոլայ Ռոմանով, Նիկոլայ Արյունարբու, ռուսական վերջին ցարը, վերջ գահընկեց արվեց 1917 թ. փետրվարի բուրժուական հեղափոխության և մահապատժի յանձնարկվեց 1918 թ. Ֆեկատերինբուրգի բանտներին գնդապետների խորհրդի վերջնամարտ։—32, 36:

— և նիկոլայ — Դանիելսոնը նարոդնիկության թեորետիկներից մեկն է։ Պետերսբուրգի լեզվով թարգմանել է Մարքսի «Կապիտալը» և թարգմանության կապակցությամբ նամակադրություն էր վարում Մարքսի և Ենգելսի հետ։ Իր հողվածներում և բրոշյուրներում, պաշտպանելով նարոդնիկության սխալ հայացքները, Դանիելսոնը հաճախ փորձում էր հենվել Մարքսի սեմիոտիկ վրա, վերջ չէր հասկացվել և աղավաղվել էր նրա հողմից։—16—18:

Ջերմիչևսկի — «ռուս մեծ դիտանական և քննադատ» (Մարքս), 60-ական թվականների հեղափոխական շարժման առաջնորդը։ Թե 1861 թ. օկտոբրի նախապատրաստման և թե օկտոբրից հետո նա մատնացույց էր անում նրա ճորտատիրական բնույթը և դանդաղ էր, վրա միայն դուրսացրեց հեղափոխությունը դուրսացնելու կտա իսկական ազատագրում։ Ալեքսանդր II-ի կողմից 1862 թ. նստեցվեց Պետրոպոլիտիկ բերդը և համարյա մինչև իր մահը դանդաղ էր բերդում, տաժանավայրում և աջորդավայրում՝ Շահուտիայում։—21, 36—38:

Ստոլիպին — 1906—1911 թ. ներքին գործերի մինիստր և մինիստրներին խորհրդի նախագահ։ Հեղափոխական բանվորներին և դուրսացրեց նկատմամբ դադանային դատատան տեսնելու համար ստացավ «Ստոլիպին-կախող» անվանը։ Անց էր կացնում հողային այնպիսի քաղաքականություն, վրոն ունում էր կուլակային տնտեսություններին չին կուլային դուրսացրեց համայնքներից խլել լավագույն հողերը և սեղանիստիկ խուտորները։—32:

Ստրուվե — անցյալ դարի 90-ական թվականներին «լեզալ մարքոիստ», հետադարձ կադետ, քաղաքական պատերազմի տարիներին՝ խորհրդային իշխանության դեմ ուղղված գլխավոր պայքարի կազմակերպիչներից մեկը, Դենիկինի և Վրանդելի հակահեղափոխական կառավարությունների մինիստր։—18:

Վ. Վ. — Վորոնցովը, նարոդնիկության թեորետիկներից մեկն է, գրել է մի շարք հողվածներ մարքսիզմի և մարքսիստների դեմ։—16:

Տուգան-Բարանովսկի — բուրժուական տնտեսագետ, անցյալ դարի 90-ական թվականներին «լեզալ մարքոիստ», հետադարձ կադետ, քաղաքական պատերազմի տարիներին մասնում էր հակահեղափոխական ուկրաինական կենտրոնական Ռադայի մեջ։—18:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Հրատարակչության կողմից . . . . .	3
Բանվորական կուսակցությունը և դյուղացիությունը . . . . .	5
Հորեկյանի առթիվ . . . . .	16
Ճորտատիրական իրավունքի անկման հիմնամյակը . . . . .	27
«Գյուղացիական ակֆորմն» ու պրոլետարներն-դյուղացիական հեղափոխությունը . . . . .	32
Խոշոր կարվածատիրական ու մանր դյուղացիական հողատիրությունը հիտառատանում . . . . .	45
Ծանոթագրություններ . . . . .	47
Անվանացանկ . . . . .	52



Խմբագիր Ա. Ղազարյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Գոլուխանյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արուսյան

Դրավիտի լրագոր Վ. 1118, հրատ. № 794  
պատվեր № 56, տիրած 7000  
Թղթի չափը 72×105 1/32 (66.880 տպ. նիշ 1  
տպ. մամուլում) 1<sup>3</sup>/<sub>4</sub> տպ. մամուլ  
Հանձնվել է արտադրության 16/II 1940 թ.  
Ստորագրվել է տպագրելու 25/III 1940 թ.  
Գինը 75 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

454  
2

357  
454 ✓

« Ազգային գրադարան



NL0181586

9460.75 4.

**В. И. ЛЕНИН**

О «КРЕСТЬЯНСКОЙ РЕФОРМЕ» 1861 Г.

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940